15 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2010 ՈՒՐԲԱԹ 188 (4568)

# Ազգ
Azg

ISSN: 1829-1651

# Փոխզիջման սահմանն ընդգծելու է ԼՂՀ ժողովուրդը

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
**Ստեփանակերտ**



ԼՂՀ ԱԺ նախագահ **Աշոտ Ղուլյանը** փաստում է, որ 1994-ի մայիսի 12-ին կնքված զինադադարից հետո էլ պատերազմը շարունակվում է: Այն նոր որակ է ստացել, տնտեսական, քաղաքական եւ տեղեկատվական ուղղություններով է ընթանում, սակայն ցանկությունը մեկն է՝ արգելափակել ԼՂՀ արդեն կայացած եւ ժողովրդավար պետության վերաբերյալ ամեն մի տեղեկատվության տարածում:

«Արցախի անվտանգության եւ իշխանության փաստը Ադրբեջանի համար ամենաասարսափելի իրականությունն է: Զինադադարից հետո հաջողվել է կառուցել ժողովրդավար պետություն, որն ի վիճակի է լուծել տնտեսական եւ սոցիալական ամենաբարդ խնդիրները: Այս փաստն Ադրբեջանին նյարդայնացնում է: Ի տարբերություն մեր հարեւանի, արհեստական եւ մտացածին հոդվածների կարիք չունենք: Իրական կյանքի ճշմարիտ արտացոլումը կարող է չեզոքացնել մեր հակառակորդների քարոզչական հնարքների բացասական հետեւանքները», ասաց նա ԼՂՀ ԱԺ-ում կայացած հանդիպման ժամանակ:

Ղուլյանը փաստում է, որ հայաստանյան կամ սփյուռքահայ լրատվամիջոցների համեմատությամբ արցախյան մամուլը դեռեւս չի կայացել ու այդ մակարդակը չի ապահովում:

«Համամիտ եմ «**Ազգ**» օրաթերթի գլխավոր խմբագիր Հակոբ Ավետիքյանի դիտարկմանը, որ արցախյան մամուլի ձայնը չի լսվում: Տեղեկատվական դաշտն անընդհատ զարգացող ոլորտ է, եւ դրա համար անհրաժեշտ են ֆինանսներ: Այսօր ԼՂՀ-ն իր հնարավորությունները ներդնում է պատերազմի հետեւանքների վերացման ուղղությամբ», ասաց նա՝ հավելելով, որ ԼՂՀ միջազգային ճանաչման հարցը չափազանց կարեւոր է եւ տեղեկատվական դաշտում պետք է ճիշտ եւ ընդգրկուն ներկայացվի: Դրան կարող է նպաստել Արցախի անկախության 20-ամյակի փաստը, որը լավագույն առիթն է ԼՂՀ-ն ներկայացնելու որպես կայացած պետություն:

«ԼՂՀ միջազգային ճանաչումից բացի այլ ճանապարհ գոյություն չունի, որը տարածաշրջանում երկարատեւ խաղաղություն եւ անվտանգություն կհաստատի: ԼՂՀ ժողովուրդը վաստակել է այդ իրավունքը եւ այն որեւէ մեկին զիջելու ցանկություն չունի:

Տես էջ 4

# Համանախագահները՝ ԵԱՀԿ ներքին զեկույցին սպասելիս

«Առաքելությունը կարեւոր հնարավորություն էր համանախագահների համար տեղում հանդիպելու բազմաթիվ մարդկանց եւ ծանոթանալու տարածքներում ներկա իրավիճակին՝ մարդասիրական կարիքների առումով բոլոր առումներում», երեկ պաշտոնապես տարածված հայտարարության մեջ այսպես են ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներն անդրադարձել օրերս Լեռնային Ղարաբաղի հարակից տարածքներ իրենց դաշտային գնահատման առաքելությանը:

ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի տեխնիկական փորձագետների մասնակցությունը առաքելությանը համանախագահները գնահատել են որպես աննախադեպ, ընդգծելով, որ այդ փորձագետների առկայությունը առաքելության խմբին հնարավորություն տվեց ավելի լավ հասկանալու «այդ տարածաշրջանում փախստականների եւ տեղահանված մարդկանց իրավունքները՝ միջազգային մարդասիրական իրավունքի շրջանակներում եւ այն պայմանները, որոնցում ապրում են այդ մարդիկ նշված տարածքներում»:

Հայտարարության համաձայն, համանախագահներն անդրադարձել են տարածաշրջան իրենց այցելությանը՝ ներկայացնելով, թե երբ, որտեղ եւ ում հետ են հանդիպել: Առաքելությանը, որ տեւեց հոկտեմբերի 7-13-ը, նախորդել էին հոկտեմբերի 6-ին Ադրբեջանի նախագահ Ալիեւ կրտսերի հետ Նախիջեւանում եւ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հետ Երեւանում կայացած հանդիպումները, ինչպես նաեւ հոկտեմբերի 7-ին Ստեփանակերտում տեղի ունեցած քննարկումները ԼՂՀ իշխանությունների հետ:

«Ներկայումս համանախագահները փորձագետների հետ ավարտում են առաքելության ընթացքում հավաքված տեղեկությունները: Այդ աշխատանքի ավարտից հետո նրանք կպատրաստեն ԵԱՀԿ ներքին զեկույց, որը կներկայացվի բոլոր կողմերին», նշված է հայտարարության մեջ:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*Մինսկի խմբի հայտարարության մասին՝ նաեւ 4-րդ էջում:*

# Ռուսական գազը կրկին մտնում է Հայաստան

Վրաստանի տարածքով Ռուսաստանից Հայաստան գազի մատակարարումը վերականգնվել է: Այդ մասին հայտնել է «Վրացական նավթային եւ գազային կորպորացիա» (GOGC) ընկերության մամուլի քարտուղար Թամարա Շոշիաշվիլին: Նրա խոսքով՝ «գազատրանսպորտային ընկերությունը վերանորոգման աշխատանքներն ավարտել է ժամանակին, եւ արդեն հոկտեմբերի 14-ին գազի առաքումը Հայաստան վերականգնվել է»: Ռուսական գազի առաքումը Հայաստան դադարեցվել էր հոկտեմբերի 11-ին «Հյուսիս-հարավ» մայրուղու վերականգնողական աշխատանքների կապակցությամբ:

# 36 տարի անց Իրանը կրկին OPEK-ում նախագահում է

Նավթի համաշխարհային շուկայի 35 տոկոսն ապահովող OPEK կազմակերպությունը անդամ 12 երկրների նախարարների հերթական՝ 157-րդ նստաշրջանն անցկացրեց Վիեննայում: Կազմակերպության նախագահի պաշտոնում հաստատվել է Իրանի նավթային արդյունաբերության նախարար Սաիդ Մասուդ Միրքազեմին: Իրանն այս կազմակերպությունում չէր նախագահում արդեն 36 տարի: ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի՝ Իրանի նկատմամբ ընդունած վերջին՝ «բոլոր տեսակի» պատժամիջոցների համայնապատկերում այս հաստատումը տարօրինակ է:

OPEK-ի անդամ երկրներն են Ալժիրը, Անգոլան, Իրաքը, Իրանը, Քաթարը, Քուվեյթը, Լիբիան, Նիգերիան, ԱՄԷ-ն, Սաուդյան Արաբիան, Վենեսուելան եւ Էկվադորը:

Հ. Ա.

**Սույն թվականի հոկտեմբերի 18-ից ապահովագրական ընկերությունների կողմից վաճառվելու են ԱՊՊԱ պայմանագրեր: Ստորեւ ներկայացված են «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ-ի կողմից ընդունված եւ Կենտրոնական բանկի կողմից հաստատված ապահովագրավճարների մեծությունները:**

**Մեկ տարի ժամկետով կնքվող ԱՊՊԱ պայմանագրերի համար նվազագույն եւ առավելագույն ապահովագրավճարները**

ՀՀ դրամ

| Օգտագործման նպատակ | Վարորդի տարիք / վարորդական ստաժ | ՏՄ տեսակ / Շարժիչի հզորություն (ձիաուժ) | | | | | | | | ՏՄ տեսակ | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Մարդատար, միկրոավտոբուս | | | | | | | | Բեռնատար | | Ավտոբուս (բացառությամբ միկրոավտոբուս), տրոլեյբուս | | Մոտոտրանսպորտ | | Այլ (կցորդ, տրակտոր և այլն) | |
| | | մինչև 80 ձ. | | 81 -ից 140 ձ. | | 141 -ից 230 ձ. | | 231 և ավելի ձ. | | | | | | | | | |
| | | Նվազագույն | Առավելագույն | Նվազագույն | Առավելագույն | Նվազագույն | Առավելագույն | Նվազագույն | Առավելագույն | Նվազագույն | Առավելագույն | Նվազագույն | Առավելագույն | Նվազագույն | Առավելագույն | Նվազագույն | Առավելագույն |
| Անձնական | Անսահմանափակ թվով վարորդներ | 41,000 | 42,000 | 51,000 | 53,000 | 65,000 | 67,000 | 74,000 | 77,000 | X | X | X | X | 30,000 | 31,000 | 30,000 | 31,000 |
| | Մինչև 23/ մինչև 3 | 37,000 | 39,000 | 47,000 | 49,000 | 60,000 | 62,000 | 68,000 | 71,000 | X | X | X | X | 27,000 | 28,000 | 28,000 | 29,000 |
| | Մինչև 23/ 3 և ավելի | 35,000 | 36,000 | 43,000 | 45,000 | 55,000 | 57,000 | 63,000 | 65,000 | X | X | X | X | 25,000 | 26,000 | 26,000 | 27,000 |
| | 23 և ավելի/ մինչև 3 | 28,000 | 29,000 | 35,000 | 36,000 | 44,000 | 46,000 | 50,000 | 52,000 | X | X | X | X | 20,000 | 21,000 | 21,000 | 21,000 |
| | 23 և ավելի/ 3 և ավելի | 25,000 | 26,000 | 32,000 | 33,000 | 41,000 | 42,000 | 46,000 | 48,000 | X | X | X | X | 19,000 | 19,000 | 19,000 | 20,000 |
| Տաքսի, վարձակալություն, հանրային տրանսպորտ (երթուղային տաքսիների մասով) | Անսահմանափակ թվով վարորդներ | 59,000 | 61,000 | 73,000 | 76,000 | 93,000 | 97,000 | 106,000 | 110,000 | X | X | X | X | X | X | X | X |
| | Մինչև 23/ մինչև 3 | 54,000 | 56,000 | 67,000 | 70,000 | 86,000 | 89,000 | 97,000 | 101,000 | X | X | X | X | X | X | X | X |
| | Մինչև 23/ 3 և ավելի | 50,000 | 52,000 | 62,000 | 65,000 | 79,000 | 82,000 | 90,000 | 94,000 | X | X | X | X | X | X | X | X |
| | 23 և ավելի/ մինչև 3 | 40,000 | 41,000 | 50,000 | 52,000 | 63,000 | 66,000 | 72,000 | 75,000 | X | X | X | X | X | X | X | X |
| | 23 և ավելի/ 3 և ավելի | 37,000 | 38,000 | 46,000 | 48,000 | 58,000 | 61,000 | 66,000 | 69,000 | X | X | X | X | X | X | X | X |
| Այլ (ծառայողական, առևտրային օգտագործման, հանրային տրանսպորտ (բացառությամբ երթուղային տաքսիների ) և այլն) | Անսահմանափակ թվով վարորդներ | 42,000 | 44,000 | 53,000 | 55,000 | 67,000 | 69,000 | 76,000 | 79,000 | 59,000 | 61,000 | 58,000 | 60,000 | 31,000 | 32,000 | 31,000 | 32,000 |
| | Մինչև 23/ մինչև 3 | 39,000 | 40,000 | 48,000 | 50,000 | 61,000 | 64,000 | 70,000 | 73,000 | 54,000 | 56,000 | 53,000 | 55,000 | 28,000 | 29,000 | 29,000 | 30,000 |
| | Մինչև 23/ 3 և ավելի | 36,000 | 37,000 | 45,000 | 46,000 | 57,000 | 59,000 | 65,000 | 67,000 | 50,000 | 52,000 | 49,000 | 51,000 | 26,000 | 27,000 | 26,000 | 27,000 |
| | 23 և ավելի/ մինչև 3 | 29,000 | 29,000 | 36,000 | 37,000 | 46,000 | 47,000 | 52,000 | 54,000 | 40,000 | 42,000 | 39,000 | 41,000 | 21,000 | 22,000 | 21,000 | 22,000 |
| | 23 և ավելի/ 3 և ավելի | 26,000 | 27,000 | 33,000 | 34,000 | 42,000 | 43,000 | 48,000 | 49,000 | 37,000 | 38,000 | 36,000 | 38,000 | 19,000 | 20,000 | 19,000 | 20,000 |

Ձեզ հետաքրքրող հարցերով կարող եք դիմել «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ:
Հասցե՝ ք. Երեւան, Թումանյան 8, թեժ գիծ՝ (374-10) 58-00-34, 58-00-43, (374-98) 55-18-55, www.paap.am, info@paap.am

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**
«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ խորհրդի 06.10.2010թ. թիվ 16-Լ որոշմամբ

**ԳՐԱՆՑՎԱԾ Է**
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 08.10.2010 թ. թիվ 251-Ա որոշմամբ

**ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է**
2010 թվականի հոկտեմբերի 18-ից

# Ընտրական օրենսգիրքը դեռ փորձաքննության կներկայացվի

## *ԵԽԽՎ-ում Հայաստանի պատվիրակության անդամները՝ լրագրողներին*

Շուտով Թուրքիան նախագահելու է ԵԽ նախարարների կոմիտեում (Ահմեդ Դավութօղլուն), ԵԽԽՎ նախագահն էլ Չավուշօղլուն է, այդպիսով, ըստ կանխատեսումների, Հայաստանի համար բավականին լուրջ մարտահրավերներ են լինելու եվրոպական կառույցներում, ԵԽԽՎ-ում Հայաստանի պատվիրակությունը ի՞նչ է հակադրելու այդ թուրքական տանդեմին: Պատասխանելով այս հարցին, ԵԽԽՎ-ում Հայաստանի պատվիրակության ղեկավար **Դավիթ Հարությունյանը** երեկ նկատեց, թե հնարավոր է, որ այդ երկու գործիչները, օգտագործելով իրենց զբաղեցրած դիրքը, իրենց օրակարգում իսկապես ունենան թուրքական հարցեր. «Յուրաքանչյուր քաղաքական գործիչ կատարում է այն, ինչ այդ պահին համարում է անհրաժեշտ, որպեսզի իր քաղաքական օրակարգն առաջ տանի, մենք էլ պատրաստվում ենք անել նույնը: Մենք շարունակելու ենք աշխատել այնպես, ինչպես աշխատել ենք», ասաց նա:

Ընդհանրապես նա եւ ԵԽԽՎ-ում Հայաստանի պատվիրակության անդամներ Նաիրա Զոհրաբյանն ու Հերմինե Նաղդալյանը հանդիպել էին լրագրողներին՝ պատմելու վերջին նստաշրջանում մերձհայկական զարգացումների մասին: Նստաշրջանի օրակարգը շատ չէր վերաբերում Հայաստանին, Հայաստանի համար ավելի կարեւոր էին մոնիտորինգի հանձնաժողովի լսումները հոկտեմբերի 5-ին, որտեղ առաջին անգամ նման ձեւաչափով (սովորաբար մոնիտորինգի հանձնաժողովի նիստերը դռնփակ են) Հայաստանի պատվիրակության բոլոր անդամներին հնարավորություն է ընձեռվել ներկայացնելու իրենց տեսակետները: Դ. Հարությունյանի տեղեկատվությունը վերաբերել է ընտրական օրենսգրքին եւ նրա վրա հետագա աշխատանքին, ոստիկանության մասին ռեֆորմին, արդար դատավարության իրավունքին, հավաքների ազատությանը: Վերջինիս հետ կապված Դ. Հարությունյանը վիճակագրություն է ներկայացրել մոնիտորինգի հանձնաժողովում՝ ՀԱԿ-ի օրինակով. տարեսկզբից 15 երթի հայտ է եղել, որոնք բոլորն էլ ի գիտություն են ընդունվել, բայց փաստացի տեղի է ունեցել միայն 9: 13 դիմում է եղել հավաք կազմակերպելու վերաբերյալ, որոնցից մեկը մերժվել է, երկուսն անփոփոխ թույլատրվել են, իսկ 10-ի վերաբերյալ այլ վայր է առաջարկվել: Ռադիոյի եւ հեռուստատեսության օրենքի ու առաջիկայում սպասվող մրցույթների վերաբերյալ եւս տեղեկատվություն է ներկայացվել մոնիտորինգի հանձնաժողովում, իսկ հանձնաժողովականների այն մտահոգությունը, թե դրական որոշում կլինի՞ Ա1+-ի վերաբերյալ, հայկական կողմը «այո» է պատասխանել, որը բխել է, ըստ Հարությունյանի, «Մելտեխի» վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումից, ինչպես նաեւ կոնվենցիայի 10-րդ հոդվածից:

Թե ինչու մոնիտորինգի հանձնաժողովի համազեկուցողները հերթական անգամ չեկան Հայաստան՝ Դ. Հարությունյանը կապեց հոկտեմբերի 19-21-ը Հայաստանում անցկացվելիք ժողովրդավարության ապագայի վերաբերյալ ֆորումի հետ. ԱԺ նախագահը դիմել էր մոնիտորինգի հանձնաժողովին՝ խնդրելով հետաձգել համազեկուցողների նախատեսվող այցելությունը, ապահովելու համար բարձր մակարդակի հանդիպումները (Հայաստանի նախագահի, ԱԺ նախագահի հետ), ինչը բավարարվեց:

Հայաստանի հարցով զեկուցողի փոփոխություն տեղի չի ունեցել, թեեւ Գորան Լինդբլադը Շվեդիայում պատգամավոր չի ընտրվել, եւ լավագույն սցենարի դեպքում անգամ նա իր զեկուցումը չի կարող ներկայացնել մոնիտորինգի հանձնաժողովում: Ողջամիտ կլիներ, որ նա հրաժարվեր, բայց դա տեղի չի ունեցել, այնպես որ երբ Շվեդիայի խորհրդարանը ներկայացնի իր նոր պատվիրակության կազմը, երեւի այդ ժամանակ էլ կքննարկվի, թե ո՞վ է լինելու զեկուցողը:

Հայկական եւ ադրբեջանական պատվիրակությունների ավանդական հանդիպումը ԵԽԽՎ նախագահի մոտ եւս տեղի է ունեցել, քննարկվում էր հիմնականում 1416 բանաձեւով նախատեսված եւ Մինսկի խմբի աշխատանքներն ուսումնասիրող ժամանակավոր հանձնաժողովի ստեղծումը, սա ադրբեջանական կողմն է առաջարկում (ինչը Դ. Հարությունյանն անարդյունավետ է համարում, իսկ ադրբեջանական պատվիրակությունը շարունակում է պնդել) եւ հնարավոր փոխհամագործակցությունը՝ խաղի կանոնների սահմանմամբ:

**Նաիրա Զոհրաբյանը** բարձրաձայնել է տարբեր խնդիրներ (ԼՂՀ-ի, տեղահանված անձանց, Նոր Նախիջեւանում ադրբեջանցիների կատարած մշակութային վանդալիզմի մասին): Մոնիտորինգի հանձնաժողովի լսումներին նա անդրադարձ է կատարել փոփոխված ընտրական օրենսգրքին՝ նշելով ԲՀԿ տեսակետը, այն է՝ ազատ-արդար ընտրությունների անցկացում եւ օրենսդրական նախաձեռնություն՝ ընտրական կեղծարարության համար պատժամիջոցները առավելագույնս խստացնելու ուղղությամբ. «Դա մեր սկզբունքային առաջարկն է, որ պատժվեն ոչ միայն մանր սլաքավորները, այլ նաեւ նրանց հրահանգավորողներն ու պատվիրատուները»: Զոհրաբյանը նաեւ անդրադարձ է արել լսումներում Ա1+-ի հարցին՝ ասելով, որ հեռուստաընկերությունը մրցունակ փաթեթ է ներկայացրել եւ հուսով է, որ դեկտեմբերին կհաղթի մրցույթում:

**Հերմինե Նաղդալյանը** նստաշրջանի ընթացքում փոխանցել է հայկական կողմի անհանգստությունը՝ Ադրբեջանի միլիտարիզացիայի վերաբերյալ, որպես ռեգիոնալ անհանգստության աղբյուր, եւ նախարարների կոմիտեի անունից ստացել հուսադրող պատասխան, որ ջատագովն են կոնֆլիկտի խաղաղ կարգավորման, Մինսկի խմբի շրջանակում:

«**Ազգի**» հարցին, թե փոփոխված ընտրական օրենսգրքում ընտրական հանձնաժողովները ձեւավորելու ընտրված մոդելը դեմոկրատական չէ եւ խոչընդոտում է արտախորհրդարանական ուժերի ներկայացվածությանը ընտրական հանձնաժողովներում՝ նախ չհամաձայնեց Ն. Զոհրաբյանը՝ մատնացույց անելով ԲՀԿ-ի ներկայացնելիք առաջարկները ընտրակեղծարարների համար պատժամիջոցներն ընդլայնելու վերաբերյալ, իսկ Դ. Հարությունյանը, խոսելով հանձնաժողովների կազմավորման մասնագիտական եւ կուսակցական մոդելների թույլ ու ուժեղ կողմերից, նկատեց, թե մենք դեռ պատրաստ չենք առաջինին: Իսկ ընտրված կուսակցական մոդելը քննարկվել է Վենետիկի հանձնաժողովը ներկայացնող փորձագետների հետ, որոշակի առաջարկություններ եղել են, այդ առաջարկներն ընդունվել են: Այսինքն՝ առաջարկվող նախագիծը փորձագետների հետ քննարկման արդյունք է, չնայած նոր փորձագիտական եզրակացություն եւս ակնկալվում է՝ նախագիծը վերջնական տեսքով կրկին փորձաքննության է ներկայացվելու:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՆՑԱԽՈՒՄԲ

# ԱՄՆ-ում ձերբակալվել է «օրենքով գող» Արմեն Ղազարյանը

## *Medicare-ի գործով մեղադրվում են 73 անձինք*

**ԱՄՆ-ում ձերբակալվել են խոշոր հանցախմբի տասնյակ անդամներ, որոնք խարդախություններ էին արել բուժապահովագրության ոլորտում: Ոստիկանության տվյալներ վկայակոչելով՝ Ասոշիեյթեդ պրես գործակալությունը հաղորդում է, որ հանցավոր խմբավորման ղեկավար, 46-ամյա «օրենքով գող» Արմեն Ղազարյանը ձերբակալվել է Կալիֆոռնիայում: Դատարանը հրաժարվել է գրավի դիմաց նրան ազատ արձակել:**

**Հանցախմբի անդամները փորձել են զառամյալների բուժօգնության Medicare դաշնային ծրագրի հիմնադրամից խաբել մոտ 163 մլն դոլար գումարով: Ապահովագրական վճարումներ ստանալու նպատակով հանցագործները «ստեղծել էին» իրականում գոյություն չունեցող բուժկլինիկաների ցանց, որտեղ իբր բուժումներ էին իրականացրել: Այդ ձեւով նրանք յուրացրել էին ավելի քան 100 մլն դոլար:**



**Չորս տարում առողջապահության ամերիկյան համակարգը խարդախներին վճարել է 35 մլն դոլար: Հանցախմբի առանցքը կազմում են նախկին հայաստանցիները: Կան նաեւ Ուկրաինայի, Ղազախստանի եւ Ռուսաստանի քաղաքացիներ:**

**Նյու Յորքում, Լոս Անջելեսում, Օհայոյի, Ջորջիայի եւ Նյու Մեքսիկոյի նահանգներում միայն մեկ օրում ձերբակալվել է 41 մարդ, 3 ուրիշներ հետախուզման մեջ են:**

**Մանհեթենի դատախազ Պրիհտ Բհարան հայտարարել է, որ Medicare-ի գործի հետեւում կանգնած է միջազգային խոշոր հանցավոր խմբավորում: Բժիշկների եւ հիվանդների վերաբերյալ գողացված տվյալներ օգտագործելով՝ չարագործները 25 նահանգներում բացել էին 118 կեղծ կլինիկաներ: Հանցագործների գրասենյակը Բրուքլինի ավտոարհեստանոցներից մեկում էր:**

**Խարդախները բժիշկների անունից բուժապահովագրության համակարգին ներկայացնում էին հաշիվներ իբր մատուցված ծառայությունների դիմաց: Օրինակ, ակնաբույժը իբր հետազոտել էր միզափամփուշտ:**

**Հանցախմբի պարագլուխ Արմեն Ղազարյանը հայտնի է նաեւ Բզո մականունով: Խարդախությունները Նյու Յորքում անմիջականորեն ղեկավարում էր 35-ամյա Ռոբերտ Թերջանյանը, Լոս Անջելեսում՝ 34-ամյա Դավիթ Միրզոյանը: Նրանց կասկածում են նաեւ գողացված վարկային քարտեր եւ մաքսանենգ ծխախոտ, թմրանյութեր վաճառելու եւ նույնիսկ կեղծված «Վիագրա» արտադրելու մեջ:**

**Ձերբակալվածներից շատերն ազատ են արձակվել 100-500 հազար դոլար գրավի դիմաց:**

**Երեկ ՀՀ ԱԳՆ խոսնակ Տիգրան Բալայանը «Արմենպրես» գործակալության հարցին պատասխանելիս հայտնել է, որ «անհրաժեշտության պարագայում, Հայաստանի համապատասխան մարմինները, բնականաբար, պատրաստ կլինեն համագործակցել իրենց ամերիկյան գործընկերների հետ՝ քննությանն աջակցելու համար»:**

# Ամուսնալուծությունը «աշխարհի վերջը չէ», սակայն դրանից խուսափելու համար լավ կլինի ամուսնանալ սիրելով

Ըստ վիճակագրական տվյալների՝ 2010-ի առաջին կիսամյակում գրանցվել է ամուսնալուծությունների 1474 դեպք, իսկ 2009-ին՝ 2829 դեպք:

ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի դասախոս, սոցիալական աշխատանքի մասնագետ **Աննա Ոսկանյանի** կարծիքով՝ ամուսնալուծությունը բնական երեւույթ է, որը տեղի է ունենում մարդկանց կյանքում: Հայաստանում ամուսնալուծությունը համարվում է օրհասական երեւույթ, սակայն ամուսնալուծությունը, ինչպես ժողովուրդն է ասում, «աշխարհի վերջը չէ»: Աննա Ոսկանյանը համամիտ չէ այն կարծիքին, թե ինչքան կայուն է ընտանիքը, այնքան կայուն է հասարակությունը: «Մարդիկ կարող են ամուսնանալ եւ ամուսնալուծվել մի քանի անգամ, սակայն ապրեն կայուն հասարակության մեջ», երեկ «Արմաս» ակումբում ասաց Աննա Ոսկանյանը: Վերջինս կարեւորում է, որ մարդիկ միմյանց սիրելով ամուսնանան. «Մարդիկ հաճախ ամուսնանում են իրար չսիրելով: Հարցնում ենք՝ ինչո՞ւ ամուսնացաք, ասում են՝ արդեն ամուսնանալու ժամանակն էր»: Ըստ Աննա Ոսկանյանի՝ կնոջն ու տղամարդուն միմյանց կապող ամենալուրջ օղակը սերն է: Եթե չկա այդ օղակը, ամուսնալուծվելու հավանականությունը մեծանում է: Ամուսնալուծությունը կանանց համար շատ ավելի ծանր երեւույթ է, քան տղամարդկանց համար: Աննա Ոսկանյանը նշեց, որ ամուսնալուծվելուց հետո տղամարդիկ կարողանում են նորից հաջողությամբ ամուսնանալ, սակայն կինն այդպիսի հնարավորություն քիչ է ունենում: Ամուսնալուծությունից խուսափելու համար հարկավոր է, որ երիտասարդները միմյանց սիրելով ամուսնանան:

Հոգեբան **Մարիամ Մեհրաբյանն** էլ նշեց, որ լավ կլինի երիտասարդները նախաամուսնական փուլում դիմեն հոգեբանի: Նախաամուսնական փուլում մասնագետները կարող են ախտորոշել ամուսնացողների անձնային որակներն ու համատեղելիությունը: Ըստ Մարիամ Մեհրաբյանի՝ շատ ամուսնալուծություններ պայմանավորված են հենց կնոջ եւ տղամարդու անհամատեղելիությամբ: Հոգեբանն անդրադարձավ նաեւ սեռական համատեղելիության խնդրին՝ նշելով, որ շատ զույգերի մեջ այն սքողված փուլում է գտնվում: Ըստ հոգեբանի՝ ամուսնալուծվող 10 զույգից երեքն ունեն սեռական համատեղելիության խնդիր: Խոսելով ամուսնալուծության պատճառների մասին՝ հոգեբանը նշեց, որ զույգի համար շատ կարեւոր է ադապտացիոն շրջանը: «Տղամարդկանց ու մայրերի կապը մինչեւ 40-50 տարեկան շատ ամուր է լինում, եւ դա ադապտացիոն շրջանում իհարկե խոչընդոտ է: Ադապտացիոն շրջանի մասին խոսելիս սոցիալական աշխատանքի մասնագետը մի անեկդոտ հիշեց. «Երբ կինը սիրում է ամերիկացուն, ամերիկացին սիրում է փողը, երբ կինը սիրում է ֆրանսիացուն, ֆրանսիացին սիրում է սեքսը, երբ կինը սիրում է հային, հայը սիրում է մամային»:

Ինչեւէ, ամուսնալուծություններից խուսափելու համար մասնագետները խորհուրդ են տալիս ամուսնանալ սիրելով, որը կօգնի անգամ ամենածանր ու դժվարին պահերին էլ փրկել ընտանիքը:

Ի. Պ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Orange նորարարության մրցանակ հայ ուսանողների համար

## *Orange-ն աշխարհում ամենանորարար օպերատորներից մեկն է*

«Մեր նպատակն է, որ Հայաստանը ոչ միայն օգտվի այն նորարարական ծառայություններից եւ գաղափարներից, որոնք գալիս են Ֆրանսիայից, Անգլիայից եւ այլ երկրներից, այլեւ հենց ինքը դառնա նորարարական գաղափարների ու նախագծերի աղբյուր», երեկ լրագրողների հետ հանդիպման ժամանակ նշեց «Ֆրանս Տելեկոմ» խմբի փոխնախագահ, Տեխնոկենտրոնի տնօրեն **Իվ Տիրոդը**: Վերջինս հակիրճ ներկայացրեց, թե նորարարական ծառայությունների ստեղծումն ինչպես է կազմակերպվում «Ֆրանս Տելեկոմում»: Իվ Տիրոդի խոսքով՝ Orange-ն աշխարհի ամենանորարար օպերատորներից մեկն է: Խոսելով Orange-ի հաջողությունների եւ գործունեության մասին՝ Իվ Տիրոդը նշեց. «Մենք ունենք 3500 գիտաշխատող, որոնք 18 տարբեր երկրներում ներկայացնում են աշխարհի 50 ազգություններ»: Orange Labs-երում, որոնք Orange «Ֆրանս Տելեկոմ» խմբի համաշխարհային նորարարական լաբորատորիաների ցանցն են կազմում, աշխատում են 3500 գիտաշխատողներ, շուկայագետներ, դիզայներներ: Տեխնոկենտրոնը, օգտվելով Orange Labs-երում ստեղծված գաղափարներից եւ տեխնոլոգիաներից, ապրանքներն ու ծառայությունները մշակում եւ առաջարկում է ճիշտ պահին: Տեխնոկենտրոնի 22 ազգությունների 450 աշխատակիցներն աշխատում են Փարիզում, Լոնդոնում եւ Ամմանում: Orange-ը Եվրոպայում գերարագ ինտերնետի առաջատարն է: Անդրադառնալով անշարժ տեխնոլոգիաներով ինտերնետին, որն աշխարհում արդեն մեծ հաջողությունների է հասել՝ Իվ Տիրոդը տեղեկացրեց, որ այս ոլորտում Orange-ն աշխարհի առաջատարներից մեկն է: «Մասնավորապես շարժական ինտերնետի ոլորտում Orange Արմենիայի գրանցած հաջողություններն ու արդյունքները մեզ համար շատ ոգեւորիչ են: Մենք մոտիկից հետեւում ենք հայաստանյան Orange-ի գործունեությանն ու հաջողություններին», ասաց Իվ Տիրոդը: Վերջինս վստահաբար ասաց, որ հաջորդ տարի նույնպես Orange-ն ունենալու է նոր ծառայություններ, որոնք կիրառվելու են Հայաստանում: «Ֆրանս Տելեկոմ» խմբի համար Հայաստանն առանձնահատուկ երկիր է: Կարճ ժամանակում Orange Արմենիան նորարարության ոլորտում շշմեցուցիչ աշխատանք է կատարել, կարողացել է գործարկել նորարարական բազմաթիվ ապրանքներ ու ծառայություններ: Հայաստանը նոր գաղափարներ առաջ քաշելու իսկական պոտենցիալ ունի: Մենք այստեղ ենք օգնելու համար, որպեսզի այդ նոր գաղափարներն իրականություն դառնան», նշեց «Ֆրանս Տելեկոմ» խմբի փոխնախագահը: Դարձյալ անդրադառնալով Orange-ի նորարարություններին՝ Իվ Տիրոդն ասաց, որ Orange-ը ստեղծում է նորարարություններ ոչ թե տեխնոլոգիաների, այլ հաճախորդների համար: «Ֆրանս Տելեկոմ» խմբի փոխնախագահը կարծում է, որ այսօր ավելի դյուրին է նորարական ծառայությունները ներմուծել այնպիսի երկրներ, որոնք ունեն նոր ստեղծված, արդիական ցանց, ինչպիսին Հայաստանն է, քան ներմուծել Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա եւ Իսպանիա: «Մենք ցանկություն ունենք Հայաստանում ստեղծել նաեւ ծրագրային հավելվածների խանութ: Ի տարբերություն այլ ծրագրային հավելվածների խանութների, որոնք սովորաբար ունենում են համաշխարհային ցանց, մեր ցանկությունն է Հայաստանում ստեղծել ծրագրային հավելվածների խանութ հայերեն լեզվով», տեղեկացրեց Իվ Տիրոդը:




Երեկ ասուլիսի ժամանակ **Իվ Տիրոդը** եւ Orange Արմենիայի գլխավոր տնօրեն **Բրունո Դյութուան** ասացին, որ Orange-ը հայ ուսանողների համար հիմնում է «Orange նորարարության մրցանակ»: Այս մրցանակին կարող է արժանանալ ԵՊՀ-ի կամ Երեւանի ճարտարագիտական համալսարանի ուսանողներից մեկը, որը հաղթող կճանաչվի նորարարական նախագծերի մրցույթում: «Այս մրցանակը կհանձնվի մոտակա 3 տարիների ընթացքում՝տարեկան մեկ անգամ», ասաց Իվ Տիրոդը: Առաջին մրցույթի մեկնարկի մասին կհայտարարվի հավելյալ:

Մրցույթի հաղթողը հնարավորություն կունենա մինչեւ 6 ամիս վճարվող աշխատանքային պրակտիկա անցնելու Orange լաբորատորիաներից մեկում՝ մասնավորապես Ֆրանսիայում: Մրցույթի հաղթողը նաեւ հնարավորություն կունենա աշխատելու նորարարական նախագծերի վրա: «Orange նորարարության մրցանակի մասին արդեն զրուցել ենք համալսարանների ռեկտորների հետ, եւ առաջիկա շաբաթների ընթացքում համալսարանների հետ կճշտվեն մանրամասները», ասաց Բրունո Դյութուան: Բանախոսները նաեւ տեղեկացրին, որ Իվ Տիրոդը Հայաստան է եկել ոչ միայն աշխատանքային այցով, այլեւ իր հետ բերել է Տեխնոկենտրոնի ամենապատավորիչ նմուշների մի հավաքածու, որը կցուցադրվի Երեւանում: Նմուշների ընտրանին ցուցադրվելու է Orange Expo ցուցահանդեսի շրջանակներում: Ցուցահանդեսն անցկացվելու է Orange-ի գլխավոր խանութում՝ հոկտեմբերի 15-17-ին, եւ բաց է լինելու բոլորի համար:

«Ֆրանս Տելեկոմ» խմբի անդամ Orange Արմենիան Հայաստանում շարժական հեռախոսակապի եւ ինտերնետի ծառայություններ է մատուցում 2009-ի նոյեմբերի 5-ից: Ընկերությունը Հայաստանում 2009-ին կատարել է 140 մլն եվրոյի ներդրումներ եւ մինչեւ տարեվերջ կիրականացնի եւս 50 մլն դոլարի ներդրում: Orange-ի 3G+ ծածկույթն այսօր ամենաընդարձակն է Հայաստանում՝ բնակչության 93 տոկոսը:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԲԱՑՈՒՄԸ՝ ՎԱՂԸ

# Տաթեւը դառնել զբոսաշրջության կենտրոն

## *Հոկտեմբերի 16-ին կգործարկվի աշխարհի ամենաերկար ճոպանուղին*

**Տաթեւում նախապատրաստական վերջին միջոցառումներն են: Բանվորների մի հսկայական խումբ գյուղի փողոցներն ու Տաթեւի վանական համալիր տանող ճանապարհներն է ասֆալտապատում, մասնագետներն էլ փորձարկում են աշխարհի ամենաերկար ճոպանուղին ու վերջին ցուցումները տալիս: Վանական համալիրի շրջակայքում բեմն են պատրաստում եւ համապատասխան սարքավորումները տեղադրում: Հոկտեմբերի 16-ին, ըստ նախնական տվյալների, ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի, վարչապետ Տիգրան Սարգսյանի եւ պատվոնասար այլ անձանց մասնակցությամբ տեղի կունենա «Տաթեւի վերածնունդ» ծրագրի պաշտոնական բացման արարողությունը, որի ընթացքում կգործարկվի նաեւ ճոպանուղին:**

**Թե ինչ է սպասվում այդ օրը, կազմակերպիչները լռում են: «Կգաք, կտեսնեք, կհիանաք», հավելում են նրանք:**

**Որոտան գետի կիրճի վրայով 5,7 կմ ձգվող Տաթեւի ճոպանուղին աշխարհի ամենաերկար օդային անհայր, Խնձորեսկ գյուղերը:**

**Այստեղ կան բոլոր նախադրյալները, որպեսզի տարածքը վերածվի հանրապետության հարավի զբոսաշրջության լավագույն կենտրոնի:**

**Ծրագրի շրջանակներում վերանորոգվել է 18-րդ դարում Տաթեւի վանական համալիրում կառուցված հանրապետության ամենամեծ ձիթանը: Հոկտեմբերի 16-ին այցելուները հնարավորություն կունենան տեսնելու արդեն վերանորոգված ձիթանի շենքը:**

**«Նախկինում ձեթի հսկայական արտադրամաս է եղել: Պեղումների ժամանակ հայտնաբերվել է ձիթանի մասնաշենքը, որը նույնպես ամբողջապես վերանորոգված է: Այժմ ձիթանի շենքը գործում է որպես թանգարան: Վանական համալիրի երեք եկեղեցիները՝ 906-ին կառուցված Սուրբ Պողոս Պետրոսը, 1087-ին կառուցված Սուրբ Աստվածածինը եւ 1295-ին՝ Սուրբ Գրիգոր Լուսավորիչը նույնպես կվերանորոգվեն», «Ազգի» զրույցում ասաց Տաթեւի վանքի վանահայր Միքայել աբեղա Գեւորգյանը:**



**ցուղին է: Ճոպանուղին պահում են երեք հենարաններ, որոնք տեղադրված են երկու կայանների միջեւ: Կայաններից մեկը գտնվում է Հալիձոր գյուղի վերեւում, մյուսը՝ Տաթեւ գյուղ տանող ճանապարհի վրա: Ճոպանուղու առավելագույն արագությունը կազմում է 37 կմ/ժ: Մեքենայով շուրջ 40 րոպե ձգվող ճանապարհն այսուհետեւ հնարավոր է անցնել 11 րոպեում: Ճոպանուղու բարձրությունը 360 մետր է: Յուրաքանչյուր ուղղությամբ կերթեւեկի մեկական տրամվայ, որը կարող է տանել մինչեւ 25 ուղեւորի:**

**Եռամյա «Տաթեւի վերածնունդ» ծրագիրը Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի նախաձեռնությունն է: Ծրագրում ներառված են Տաթեւ, Հալիձոր, Տանձաթափ, Սվարանց, Խոտ, Շինու-**

**«Անի տուր» տուրիստական գործակալության տնօրեն Վոլոդյա Առուշանյանի մեկնաբանությամբ էլ ճոպանուղու բացումը զբոսաշրջության բնագավառում դրական ազդեցություն կունենա: «Հայաստանը եզակի երկրների թվին է պատկանում, որն ունի բոլոր նախադրյալները զբոսաշրջության հրաշալի կենտրոնի վերածվելու համար: Սակայն երբ նշում ենք, որ զբոսաշրջիկների թիվը շատ չէ, պատճառը ոչ թե գեղեցիկ վայրերի, եկեղեցիների կամ հուշարձանների թվի սակավությունն է, այլ ճանապարհների եւ ենթակառուցվածքների թերի լինելը: Շինարարական այս աշխատանքները կնպաստեն, որ Տաթեւը դառնա զբոսաշրջության կենտրոն», ասաց նա:**

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Տաթեւ

# Տրանսպորտի եւ կապի նախարարը՝ «Օրանժի» գործունեության մասին

**Ինչպես տեղեկացանք տրանսպորտի եւ կապի նախարարության մամուլի ծառայությունից, նախարար Մանուկ Վարդանյանը երեկ ընդունել է «Ֆրանս Տելեկոմ» ընկերության փոխնախագահ, «Օրանժ» տեխնոկենտրոնի տնօրեն Իվ Տիրոդին եւ «Օրանժ Արմենիա» ընկերության տնօրեն Բրունո Դյութուային: Նախարարը գոհունակություն է հայտնել նաեւ «Օրանժ Արմենիա» ընկերության կատարած աշխատանքների համար եւ նշել, որ դա նաեւ մրցակցության արդյունք է:**

**Իվ Տիրոդը, կարեւորելով նորարարությունների ներդրումը Հայաստանում, տեղեկացրել է, որ Երեւանում բացվելիք «Օրանժ էքսպո» ցուցահանդեսում կներկայացվեն «Օրանժ» տեխնոկենտրոնի նորարար նմուշները: Նա հայտնել է, որ Հայաստանը աշխարհում երկրորդ երկիրն է, ուր ներդրվել է HD ձայնային ծրագիրը: Իվ Տիրոդը տեղեկացրել է նաեւ, որ առաջիկա երեք տարիներին Երեւանի պետական համալսարանի եւ Երեւանի պետական ճարտարագիտական համալսարանների ուսանողների համար կհայտարարվի մրցույթ՝ նորարարական մրցանակի համար, եւ հաղթողը 6 ամիս կաշխատի «Օրանժի» լաբորատորիաներում:**

**Մանուկ Վարդանյանն առաջարկել է «Օրանժ Արմենիայի» գործունեությունն ավելի հրապարակային դարձնել, որ հասարակությունը լիարժեք տեղեկանա նորարարություններին, գործող ծառայությունների սակագներին:**

Ա. Մ.

ՀԱՄԱՌՈՏ

## Նոր տառեր մեքենաների համարանիշների համար

Կառավարության երեկվա որոշմամբ տրանսպորտային միջոցների համարանիշների հաշվառման ժամանակ, բացի Ս, Օ, Տ, Լ տառերից, այսուհետեւ կարող են օգտագործվել նաեւ Պ, Ն, Թ, Դ, Վ տառերը, քանի որ առաջին 4 տառերը պարունակող եւ հետաքրքրություն ներկայացնող համարանիշները գրեթե սպառվել էին:

## Բաժնետերերի մասին տեղեկատվությունը հասանելի կլինի

«Բաժնետիրական ընկերությունների մասին» եւ «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքներում երեկ կառավարության հավանությանն արժանացած փոփոխությունները նպատակ ունեն կարգավորելու մասնագիտացված կազմակերպությունների կողմից ընկերության բաժնետերերի ռեեստրում ներառված տեղեկությունների թույլատրելի օգտագործման հետ կապված հարցերը, ինչպես նաեւ արգելել բաժնետերերի անհատական տվյալներ բովանդակող տեղեկությունների տարածումը: Վարչապետ Տիգրան Սարգսյանն օրենքների փոփոխությունները կարեւորեց այն առումով, որ քաղաքացիներն այսուհետեւ կկարողանան իմանալ, թե ովքեր են բաժնետիրական ընկերությունների սեփականատերերը:

## «Զարգացման հայկական գործակալության» շենքը՝ «Համահայկական բանկին»

«Զարգացման հայկական գործակալության» կանոնադրական կապիտալը նվազեցնելով՝ կառավարությունը երեկ Երեւանի Չարենցի 17 հասցեում շենքային համապատասխան պայմաններով է ապահովել «Համահայկական բանկ» բաց բաժնետիրական ընկերությանը, իսկ գործակալությանը վարձակալության իրավունքով հանձնել է Երեւանի Կոմիտասի 49/3 շենքի 10-րդ եւ 11-րդ հարկերի 800 քառ. մետր տարածքը:

Ա. Մ.

# «Բանակի հզորացմամբ ստիպում ենք Ադրբեջանին խաղաղության պահպանում»



Եթե Ստեփանակերտում իրավիճակի վերաբերյալ հարցին պատասխանում են՝ ո՛չ խաղաղություն է, ո՛չ պատերազմ, ապա ԼՂՀ պաշտպանական բանակի հրամանատար **Մովսես Հակոբյանի** փոխանցմամբ՝ հարցին առաջին գծում պատասխանում են՝ պատերազմ է: «Առաջին գծում իրավիճակն անփոփոխ է եւ հակասական: Այսօր էլ շփման գծում տիրում է պատերազմական իրավիճակ, եւ կատարվում են ռազմական գործողություններ: Իհարկե, դրանք չի կարելի համեմատել 90-ականների ռազմական գործողությունների հետ, սակայն բնույթով դրանք ռազմական գործողություններ են: Առաջին գծում դիրքային պատերազմը շարունակվում է», ասաց Մովսես Հակոբյանը:

Նա հավելում է, որ պատերազմից հետո զինադադարը ընդամենը խաղաղ բանակցություններ սկսելու սկիզբն էր, հետեւաբար պատերազմի վերսկսումը բացառված չէ:

Անդրադառնալով ԼՂ հակամարտության վերաբերյալ բանակցային գործընթացին՝ Մովսես Հակոբյանը նշեց, որ գործընթացում պրոբլեմ կա: Խնդիրներ ստեղծում է Ադրբեջանը, որ հրաժարվում է բանակցություններ վարել ԼՂՀ-ի հետ, մինչդեռ հիմնախնդիրը Արցախում է:

Ներկայացնելով պաշտպանական բանակի սպառազինությունը՝ Հակոբյանն ընդգծեց, որ անցյալ տարի կառուցվել է զինամթերքի երկու հսկայական պահեստ: «Դրանք խանութի սովորական պահեստի հետ մի համեմատեք. լուրջ կառույցներ են: Ամեն օր բանակի հզորացմամբ հակառակորդին ստիպում ենք խաղաղության պահպանում: Եթե Ադրբեջանը զգաց, որ կարող է պատերազմի միջոցով հարցը լուծել, ապա կդիմի այդ քայլին, եւ նրան եվրոպական որեւէ կազմակերպություն չի կարող կանգնեցնել: Սա գիտակցում ենք եւ փորձում դիմագրավել հակառակորդին», ասաց նա: Հակոբյանը թերահավատորեն է ընդունում ադրբեջանական բանակի հզորացման վերաբերյալ ադրբեջանցի պաշտոնյաների եւ Ալիեւ կրտսերի հայտարարությունները:

«5 տարվա ընթացքում անհնար է բանակ շենացնել: Մենք բանակի շենացմամբ զբաղվում ենք զինադադարի կնքումից հետո: Բանակի սպառազինությունն էլ ընթանում է ըստ ծրագրի: Ձեզ թող չմտահոգի հանգամանքը, որ Ադրբեջանը Ռուսաստանից C-300 է գնում: Մենք C-300 ունենք եւ վաղուց»:

Մովսես Հակոբյանը դրական է գնահատում նաեւ զինվորների մարտական պատրաստվածությունը: Նոյեմբերի 12-ին Աղդամի Տիգրանակերտի զորավարժարանում խոշոր զորավարժություն է սպասվում: Բանակում ապահովվածությունը նույնպես դրական է: Եթե 90-ականներին սնունդ, հագուստ ճարելը խնդիր էր, ջեռուցումն ու լուսավորումը՝ ճոխություն, այսօր այդ հարցերը նույնպես լուծված են:

Ադրբեջանն ագրեսոր է՝ փաստում են Մովսես Հակոբյանի ներկայացրած թվերը: Այս տարի Ադրբեջանը հրադադարի ռեժիմը խախտել է ավելի քան 4000 անգամ՝ օգտագործելով 45.745 փամփուշտ: Մեկ տարվա ընթացքում Ադրբեջանը 30 դիվերսիոն խումբ է ուղարկել Հայաստան, որից ընդամենը երկուսն են հայտնի հասարակությանը: «Մնացած 28 դիվերսիոն խմբերի գործունեությունը կանխվել է, որովհետեւ առաջին գծում կանգնած զինվորը սպասում է այդ գործունեությանը, որովհետեւ զինվորը վճռական է, ոգին՝ բարձր: Ադրբեջանական դիվերսիոն խմբերի գործունեությանը հայկական կողմը համարժեք պատասխան է տվել, որեւէ դեպք անպատիժ չի մնացել»:

Ինչ վերաբերում է վերջին շրջանում բանակում կատարված իրադարձություններին ու խնդիրներին, Հակոբյանը նշում է, որ դրանք մտահոգիչ են, սակայն լավ գործն ավելի շատ է, քան դժբախտ պատահարները: Նա հավելում է, որ ավելի շատ խրախուսման մասին հրամաններ է ստորագրում, քան տույժերի:

«Բանակի բարոյահոգեբանական վիճակը կայուն է, եւ բացթողումները չեն կարող մեզ շեղել մեր նպատակներից»:

Ինչ վերաբերում է ՊԲ զորքի թվին, ապա Հակոբյանը տալիս է չափազանց դիվանագիտական պատասխան. «ՊԲ-ն այնքան զորք ունի, որքան Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը՝ բնակչություն: 1994-ի հաղթանակը հերթական անգամ ապացուցեց, որ պատերազմում հաղթում է ոչ թե բանակը, այլ՝ ժողովուրդը: Իսկ մեր հաղթական մտադրության մասին համոզվելու համար այցելեք առաջին գիծ», եզրափակեց Մովսես Հակոբյանը:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ստեփանակերտ



ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՑ

# Մինսկի խումբն իր բառապաշարով չափն անցնում է

## *Հայաստանը լռում է, Արցախը լռում է, ո՞վ է համանախագահների առաջն առնելու*

**ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահությունը այս տարվա անցնող իննուկես ամիսների ընթացքում տարածել է շուրջ երկու տասնյակ հայտարարություն, որոնք բոլորը տեղադրված են ԵԱՀԿ պաշտոնական կայքէջում (www.osce.org): Ընդհանրապես, միջազգային կազմակերպությունների հայտարարություններում, զեկույցներում, բանաձեւերում եւ հրապարակումներում փորձ է արվում չեզոքություն եւ հավասարակշռություն պահպանել: Այդ տեքստերից ու դրանցում օգտագործվող բառապաշարից, հատկապես երբ դրանք վերաբերում են էթնիկ հակամարտություններին, սովորաբար դժգոհ են մնում ներգրավված երկու կամ բոլոր կողմերը: Բայց դա է միակ ճանապարհը, այլապես, եթե հայտարարություններն ու բանաձեւերը բխեն մի կողմի շահերից, ապա այլեւս անիմաստ կլինի խոսել միջնորդությունից:**

**Նույնը վերաբերում է ԵԱՀԿ-ին ու նրա հովանու տակ գործող Մինսկի խմբին: Սակայն վերջին շրջանի հայտարարությունները, հատկապես երեկվանը (14 հոկտեմբեր, 2010), բոլորովին էլ չի խոսում համանախագահների ընտրած բառապաշարի չեզոքության ու անկողմնակալության մասին: Խոսքը Վիեննայից՝ ԵԱՀԿ կենտրոնակայանից, համանախագահներ Բեռնար Ֆասիեի, Ռոբերտ Բրադկեի ու Իգոր Պոպովի անունով՝ անգլերենով տարածած հայտարարության մասին է: Կեսէջանոց տեքստում երկու անգամ օգտագործվել է «դե ֆակտո տեղական իշխանություններ» (de facto local authorities) եւ «Ստեփանակերտի/ Խանքենդիի դե ֆակտո իշխանություններ» (de facto authorities in Stepanakert/Khankendi) տերմինը:**

**Թե ինչպես պետք է անվանվեն Լեռնային Ղարաբաղի իշխանությունները՝ միջազգային հանրության համար չկա գրավոր կանոն կամ պարտադիր պահանջ: Սակայն եթե 1992-ից կարդանք ԵԱՀԿ (մինչեւ 1994-ի դեկտեմբեր՝ ԵԱՀԽ) փաստաթղթերը, ապա կտեսնենք, որ Մինսկի խմբի այսօրվա համանախագահությունը, գլխավորությամբ Ֆասիեի, որ եռյակի մեջ ավագ դիվանագետն է, օգտագործում է ոչ միայն Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի, այլեւ հենց ԵԱՀԿ-ի համար անսովոր ու անընդունելի բառապաշար:**

**Այսպես, ԵԱՀԽ 1992 թ Հելսինկիի մարտի 24-ի փաստաթղթում, որը կարելի է համարել առաջինը ղարաբաղյան հակամարտության կարգավորման մասին ու թերեւս կարեւորագույններից մեկը այս կազմակերպության պատմության ընթացքում (Արցախի հարցով), օգտագործվել է «Լեռնային Ղարաբաղի ընտրված եւ այլ ներկայացուցիչներ» ձեւակերպումը: Հետագա տարիներին եւս Արցախի ընտրված իշխանությունների հասցեին պաշտոնապես չի օգտագործվել այն բառապաշարը, որը կարդում ենք երեկվա՝ հոկտեմբերի 14-ի հայտարարության մեջ:**

**Խոսելով հոկտեմբերի 7-13-ը «Լեռնային Ղարաբաղին հարակից օկուպացված տարածքներում» (the occupied territories surrounding Nagorno-Karabakh) իրականացված փաստահավաք առաքելության մասին, հայտարարությունում ասվում է, որ միջնորդներն ու ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրշիկը համագործակցել են «դե ֆակտո տեղական իշխանությունների» հետ: Այսինքն, ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանն ու իշխանության մյուս ներկայացուցիչները Մինսկի խմբի համար ընդամենը դե ֆակտո տեղական իշխանություններ են ու ոչ ավելին:**

**«Օկուպացված տարածքներ» ձեւակերպումը նոր չէ եւ գալիս է դեռ 1993-ին ընդունված ՄԱԿ-ի ԱԽ չորս բանաձեւերից: Նորությունը եւ վիրավորականը «դե ֆակտո տեղական իշխանություններ» ձեւակերպումն է, որը օգտագործվում է վերջին մեկ տարվա ընթացքում, ըստ որում՝ ոչ առաջին անգամ:**

**Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի արտգործնախարարությունները պետք է զսպեն ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահությանը՝ հետագայում նման վիրավորական հայտարարություններից հեռու պահելու նպատակով: Եվ դա պետք է անեն ոչ թե ներքին խողովակներով, այլ բացահայտ ու կոշտ տոնով:**

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ
«Սիվիլիթաս» հիմնադրամի փորձագետ

# Փոխզիջման սահմանն ընդգծելու է ԼՂՀ ժողովուրդը

*1-ին էջից*

Բացատրություն չենք ստացել այն պարզ հարցին, թե ինչու ԼՂՀ-ն պետք է բացառություն կազմի ներկայիս նորանկախ պետությունների շարքում միջազգային ճանաչում ստանալու իր նպատակի մեջ: Եվ մինչեւ այդ հարցը չստանա տրամաբանական լուծում՝ տարածաշրջանը շարունակելու է մնալ անցանկալի վտանգների եւ սպառնալիքների կենտրոն»:

Անդրադառնալով Կոսովոյի ճանաչմանը՝ Ղուլյանը շեշտեց, որ Ղարաբաղի անկախություն եւ ճանաչում ստանալու հիմքերը շատ ավելի մեծ են: Սակայն վերջին 20 տարվա ընթացքում հակամարտության արդյունքում նոր պետությունների ճանաչումը տեղի է ունեցել ոչ թե միջազգային իրավունքի դասական օրենքներին համապատասխան, այլ քաղաքական նկատառումների տեսանկյունից:

«ԼՂՀ ինքնորոշման իրավունքը որեւէ կապ չունի Ադրբեջանի հետ: Այսօր միջազգային հանրությունը միջազգային իրավունքի սկզբունքներին համապատասխան քննարկում չի իրականացնում: Բացի այդ՝ չունենք ընդդիմախոս, որի հետ հնարավոր լինի խոսել միջազգային իրավունքի լեզվով», ասաց ԼՂՀ ԱԺ նախագահը:

ԼՂՀ ԱԺ քաղաքական ուժերը, ստեղծագործական միություններն ու հասարակական կազմակերպությունները միջազգային կառույցներին նամակ են ուղարկել՝ արտահայտելով իրենց անհանգստությունն ու մտահոգությունները վերջերս ԵԱՀԿ ՄԽ շրջանակներում ԼՂՀ-ում անցկացրած դաշտային առաքելության կապակցությամբ:

«Գնահատականը բացասական է, որովհետեւ առաքելությունն անցկացվել է միակողմանի: Սակայն, եթե հայտարարում ենք, որ Ղարաբաղը բաց է, գաղտնիքներ չունի եւ պատրաստ է երկխոսության, ապա միջազգային կառույցների նմանատիպ առաքելությունները մերժելու համար պետք է ունենանք համապատասխան հիմնավորում: Այս առաքելությունն իրականացվել է համանախագահների կողմից հակամարտության խնդրի վերաբերյալ տարածքների ուսումնասիրման շրջանակներում: ԼՂՀ ժողովուրդը պահանջում էր առաքելություն անցկացնել հակամարտության ողջ տարածքում: Եվ Ղարաբաղ այցելության ժամանակ նրանք տեսան հասարակության դժգոհությունն ու հավասարաչափության սկզբունքի պահպանման ցանկությունն ու անհրաժեշտությունը: Եվ վերջերս հայտարարվեց, որ նմանատիպ առաքելություն անցկացվելու է հակամարտության ողջ տարածքում»:

Թե ինչո՞ւ ԼՂՀ-ն մաս չի կազմում ՀՀ-ին հարցին ի պատասխան Աշոտ Ղուլյանը ներկայացրեց պատմական փաստեր, որոնց արդյունքում Ղարաբաղը ստացել է անկախություն: Միաժամանակ նա նշեց, որ ԼՂՀ-ում չկա որեւէ մեկը, որ դեմ արտահայտվի Հայաստանի հետ միացմանը:

«Սակայն մի պահ խորհենք: Երկու հայկական պետություններ ունենալով մենք շահո՞ւմ ենք, թե՞ պարտվում, ապագայում ունենալով երկու ձայն միջազգային կազմակերպություններում մի՞թե չենք շահում: Եթե վաղը երրորդ հայկական հանրապետություն լինի՝ միայն կողջունեմ»:

Փոխզիջման մասին խոսակցություններին Ղուլյանը պատասխանեց, որ չի կարելի խոսել որեւէ կարգի զիջման մասին, երբ Ադրբեջանը որեւէ հայտարարություն, որեւէ դիրքորոշում չի արտահայտել, փոխզիջումների սահմանի գծումն էլ վերապահված է միայն ԼՂՀ ժողովրդին:

# Ադրբեջանի քաղաքացի Գրիգորի Այվազյանը

**«Ադրբեջանահայերի ասամբլեա» հասարակական կազմակերպության նախագահը Ադրբեջանում անցկացվելիք խորհրդարանական ընտրությունների շեմին տարբերաբար ասուլիսներ է հրավիրում: Պատճառն այն է, որ Այվազյանը դիմում է ներկայացրել Ադրբեջանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովին, որով ներկայացրել է Միլի մեջլիսի պատգամավոր ընտրվելու իր թեկնածությունը: Ադրբեջանի ԿԸՀ-ի նախագահ Մազարի Պանախովը, սակայն, օրեր առաջ հերքել էր Այվազյանի դիմումի առկայությունը՝ նշելով. «Մենք այդ մասին տեղեկացել ենք բացառապես մամուլից, իսկ այդ տեղեկություններով մենք չենք կարող պաշտոնապես թեկնածու գրանցել»: Երեկ հերթական ասուլիսում Այվազյանը վերահաստատեց, որ ինքը պաշտոնապես դիմել է Ադրբեջանի ԿԸՀ-ին, եւ Պանախովի ասածը ապատեղեկատվություն է. «Մենք «Հայփոստից» ճշտել ենք, որ այդ նամակը Վիեննայից հասել է Բաքու՝ տարանցիկ ճանապարհով, հետեւաբար մենք դիմել ենք պաշտոնական ձեւով եւ այժմ սպասում ենք պատասխանի», նշեց Այվազյանը: Իսկ պատասխանի բացակայությունը, կամ դրա բացասական լինելը, ըստ բանախոսի, կնշանակի, որ Ադրբեջանը հերթական անգամ «խայտառակ կլինի ամբողջ աշխարհի առջեւ». «Դրանով Բաքուն եւս մեկ անգամ կապացուցի, որ ո՛չ բարոյական, ո՛չ իրավական իրավունք չունի հավակնելու ԼՂ-ին: Ադրբեջանը կխայտառակվի այնպես, ինչպես հայ հովվի գերեվարման եւ սպանության դեպքում», նշեց Այվազյանը: Պատասխանի դրական լինելու պարագայում բանախոսը պատրաստվում է իրականացնել ակտիվ նախընտրական քարոզարշավ. «Մենք աշխարհում ունենք սփռված մեկմիլիոնանոց ադրբեջանահայություն, որոնք կարող են լինել իմ ընտրողները: Նրանց համար ամբողջ աշխարհում պետք է ընտրատեղամասեր բացվեն»:**

**Իսկ ունի՞ արդյոք Գրիգորի Այվազյանը Ադրբեջանի խորհրդարանի ընտրություններին մասնակցելու իրավունք, պարզվում է՝ այո, ըստ որում՝ Այվազյանի այդ իրավունքը հաստատված է Ադրբեջանի սահմանադրությամբ. «Համաձայն Ադրբեջանի սահմանադրության՝ այդ երկրում ծնված մարդը համարվում է ցմահ Ադրբեջանի քաղաքացի, եւ ես ցանկանում եմ հիշեցնել Ադրբեջանի ԿԸՀ-ի նախագահ Պանախովին, որ իրենց իսկ սահմանադրությունը հստակ սահմանում է, թե ո՞վ է հանդիսանում այդ երկրի քաղաքացի», եզրափակեց Այվազյանը: Հավելենք նաեւ, որ Ադրբեջանի յուրաքանչյուր չափահաս քաղաքացի, ինչպիսին, փաստորեն Այվազյանն է, կարող է մասնակցել ինչպես խորհրդարանական, այնպես էլ նախագահական ընտրություններին: Ի դեպ, Գրիգորի Այվազյանը նաեւ այդպիսի հավակնություններ ունի: Հ. Ա.**

# Ֆինանսական հաշվետվություններ

*Հավելված 7*

*Հաստատված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հունիսի 12-ի թիվ 180 Ն որոշմամբ*

**ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ (Ձեւ 6)**

«14»հոկտեմբերի 2010թ.

«Գրիար-Ինշուրանս» ԱՓԲԸ,,ՀՎՀՀ 00847548

ք. Երեւան,Ամիրյան 4/6

01.01.10-30.09.10

| | ԱՆՎԱՆՈՒՄԸ | Ծանոթագրություններ | Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանի վերջի դրությամբ | Նախորդ տարվա վերջի դրությամբ |
|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 |
| 1 | Ընթացիկ ակտիվներ | | | |
| 1.1 | Դրամական միջոցներ | 3 | 85776 | 41869 |
| 1.2 | Ապահովագրության գծով ստացվելիք գումարներ | 4 | 1392 | 23204 |
| 1.3 | Ընթացիկ ավանդներ | 5 | 834920 | 842630 |
| 1.4 | Ընթացիկ փոխատվություններ | 6 | 155000 | 127000 |
| 1.5 | Առեւտրական նպատակներով պահվող արժեթղթեր | 7 | | |
| 1.6 | Վաճառքի համար մատչելի ընթացիկ արժեթղթեր | 8 | | |
| 1.7 | Մինչեւ մարման ժամկետը պահվող ընթացիկ արժեթղթեր | 9 | 68099 | 74499 |
| 1.8 | Դեբիտորական պարտքեր եւ կանխավճարներ | 10 | 24393 | 9082 |
| 1.9 | Ստացվելիք տոկոսներ | 11 | 13311 | 35249 |
| 1.10 | Այլ ընթացիկ ակտիվներ | 12 | | 772 |
| 1.11 | Ընդամենը ընթացիկ ակտիվներ | | 1182890 | 1154305 |
| 2 | Ոչ ընթացիկ ակտիվներ | | | |
| 2.1 | Հիմնական միջոցներ եւ ոչ նյութական ակտիվներ | 13 | 20746 | 24576 |
| 2.2 | Ոչ ընթացիկ ավանդներ | 14 | | 30911 |
| 2.3 | Ոչ ընթացիկ փոխատվություններ | 15 | | |
| 2.4 | Վաճառքի համար մատչելի ոչ ընթացիկ արժեթղթեր | 16 | | |
| 2.5 | Մինչեւ մարման ժամկետը պահվող ոչ ընթացիկ արժեթղթեր | 17 | | |
| 2.6 | Ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալներում | 18 | | |
| 2.7 | Ստացվելիք տոկոսներ | 19 | | 1468 |
| 2.8 | Հետաձգված հարկային ակտիվներ | 20 | | |
| 2.9 | Այլ ոչ ընթացիկ ակտիվներ | 21 | | |
| 2.10 | Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ | | 20746 | 56955 |
| 3 | ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ | | 1203636 | 1211260 |
| 4 | Ընթացիկ պարտավորություններ | | | |
| 4.1 | Ապահովագրության գծով վճարվելիք գումարներ | 22 | 161 | 2748 |
| 4.2 | Ապահովագրության գծով փոխանցվելիք ապահովագրավճարներ | 23 | | 5197 |
| 4.3 | Ընթացիկ փոխառություններ | 24 | | |
| 4.4 | Ապահովագրական ընկերության կողմից թողարկված ընթացիկ արժեթղթեր | 25 | | |
| 4.5 | Չվաստակած ապահովագրավճարների պահուստ | 26 | | 137261 |
| 4.6 | Պահանջների (վնասների) պահուստ | 27 | 14976 | 20485 |
| 4.7 | Մաթեմատիկական պահուստ | 28 | | |
| 4.8 | Այլ ապահովագրական պահուստներ | 29 | 5347 | 5347 |
| 4.9 | Այլ վճարվելիք գումարներ | 30 | 151816 | 9024 |
| 4.10 | Այլ ընթացիկ պարտավորություններ | 31 | 578 | 10505 |
| 4.11 | Ընդամենը ընթացիկ պարտավորություններ | | 172878 | 190567 |
| 5 | Ոչ ընթացիկ պարտավորություններ | | | |
| 5.1 | Ոչ ընթացիկ փոխառություններ | 32 | | |
| 5.2 | Ընկերության կողմից թողարկված ոչ ընթացիկ արժեթղթեր | 33 | | |
| 5.3 | Վճարվելիք տոկոսներ | 34 | | |
| 5.4 | Հետաձգված հարկային պարտավորություններ | 35 | | |
| 5.5 | Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ | 36 | | |
| 5.6 | Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ | | | |
| 5.8 | Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ | | | |
| 6 | Կապիտալ | | | |
| 6.1 | Կանոնադրական կապիտալ | 37 | 705960 | 705671 |
| 6.2 | Էմիսիոն եկամուտ | 38 | | |
| 6.3 | Պահուստներ` | | | |
| 6.3.1 | Գլխավոր պահուստ | 39 | 19771 | 9135 |
| 6.3.2 | Վերագնահատման պահուստներ | 40 | | |
| 6.4 | Չբաշխված շահույթ (վնաս) | 41 | 305027 | 305887 |
| 6.5 | Կապիտալի այլ տարրեր | 42 | | |
| 6.6 | Ընդամենը կապիտալ | | 1030758 | 1020693 |
| 7 | ԸՆԴԱՄԵՆԸ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | 1203636 | 1211260 |

Ապահովագրական ընկերության գործադիր տնօրեն (վարչության նախագահ)

Գլխավոր հաշվապահ

**ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (Ձեւ 7)**

«14» հոկտեմբերի 2010թ.

«Գրիար-Ինշուրանս» ԱՓԲԸ,,ՀՎՀՀ 00847548

ք. Երեւան,Ամիրյան 4/6

01.01.10-30.09.10

*(հազար դրամ)*

| ԱՆՎԱՆՈՒՄԸ | Ծանոթագրություններ | Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջան | Ընթացիկ տարվա սկզբից մինչեւ հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան (աճողական) | Նախորդ տարվա համադրելի ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջան | Նախորդ տարվա սկզբից մինչեւ համադրելի հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան (աճողական) |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 Եկամուտներ ոչ կյանքի ապահովագրության գծով | | 59,242 | 227,342 | 98,095 | 293,739 |
| 1.1 Եկամուտներ ապահովագրավճարներից | 43 | 58,853 | 224,618 | 96,518 | 290,329 |
| 1.2 Եկամուտներ միջնորդավճարներից | 44 | 1 | 32 | 43 | 276 |
| 1.3 Եկամուտներ համապատասխանագրողներից ստացվելիք հատուցումներից | 45 | 0 | | | |
| 1.4 Եկամուտներ վերաապահովագրողներից ստացվելիք հատուցումներից | 46 | 61 | 153 | 189 | 581 |
| 1.5 Եկամուտներ սուբրոգացիայից | 47 | 329 | 1,581 | 1,345 | 2,553 |
| 1.6 Այլ եկամուտներ | 48 | 0 | 958 | | |
| 2 Եկամուտներ կյանքի ապահովագրության գծով | | | | | |
| 2.1 Եկամուտներ ապահովագրավճարներից | 49 | | | | |
| 2.2 Եկամուտներ միջնորդավճարներից | 50 | | | | |
| 2.3 Եկամուտներ համապատասխանագրողներից ստացվելիք հատուցումներից | 51 | | | | |
| 2.4 Եկամուտներ վերաապահովագրողներից ստացվելիք հատուցումներից | 52 | | | | |
| 2.5 Եկամուտներ սուբրոգացիայից | 53 | | | | |
| 2.6 Այլ եկամուտներ | 54 | | | | |
| 3 Եկամուտներ ապահովագրական պահուստների հակադարձումից եւ դրանց նվազեցումից | | 36,094 | 134,426 | 52,027 | 223,454 |
| 3.1 Եկամուտներ չվաստակած ապահովագրավճարների պահուստի հակադարձումից | 55 | 16,839 | 76,390 | 16,127 | 60,599 |
| 3.2 Եկամուտներ պահանջների (վնասի) պահուստի հակադարձումից | 56 | 19,255 | 58,037 | 35,900 | 162,856 |
| 3.3 Եկամուտներ մաթեմատիկական պահուստի հակադարձումից | 57 | | | | |
| 3.4 Եկամուտներ ապահովագրական այլ պահուստների հակադարձումից | 58 | | | | |
| 3.5 Եկամուտներ չվաստակած ապահովագրավճարների պահուստից վերաապահովագրողի բաժնի նվազեցման գծով | 59 | | | | |
| 3.6 Եկամուտներ պահանջների (վնասների) պահուստից վերաապահովագրողի բաժնի նվազեցման գծով | 60 | | | | |
| 3.7 Եկամուտներ մաթեմատիկական պահուստից վերաապահովագրողի բաժնի նվազեցման գծով | 61 | | | | |
| 3.8 Եկամուտներ այլ ապահովագրական պահուստներից վերաապահովագրողի բաժնի նվազեցման գծով | 62 | | | | |
| 4 Ծախսեր ոչ կյանքի ապահովագրության գծով | | (85,615) | (155,693) | (53,032) | (170,547) |
| 4.1 Հատուցումներ ուղղակի ապահովագրության պայմանագրերի գծով | 63 | (60,160) | (73,550) | (8,519) | (31,111) |
| 4.2 Հատուցումներ համապատասխանագրության պայմանագրերի գծով | 64 | | | | |
| 4.3 Հատուցումներ վերաապահովագրության պայմանագրերի գծով | 65 | | | | |
| 4.4 Ծախսեր ապահովագրական միջնորդների գծով | 66 | (9,494) | (40,614) | (20,286) | (79,782) |
| 4.5 Ծախսեր վերաապահովագրողներին փոխանցվելիք ապահովագրավճարների գծով | 67 | (14,290) | (35,543) | (22,430) | (56,166) |
| 4.6 Այլ ծախսեր | 68 | (1,671) | (5,986) | (1,798) | (3,488) |
| 5 Ծախսեր կյանքի ապահովագրության գծով | | | | | |
| 5.1 Հատուցումներ ուղղակի ապահովագրության պայմանագրերի գծով | 69 | | | | |
| 5.2 Հատուցումներ համապատասխանագրության պայմանագրերի գծով | 70 | | | | |
| 5.3 Հատուցումներ վերաապահովագրության պայմանագրերի գծով | 71 | | | | |
| 5.4 Ծախսեր ապահովագրական միջնորդների գծով | 72 | | | | |
| 5.5 Ծախսեր վերաապահովագրողներին փոխանցվելիք ապահովագրավճարների գծով | 73 | | | | |
| 5.6 Այլ ծախսեր | 74 | | | | |
| 6 Ծախսեր ապահովագրական պահուստների ձեւավորման գծով | | (34,747) | (123,724) | (56,478) | (260,972) |
| 6.1 Ծախսեր չվաստակած ապահովագրավճարների պահուստի ձեւավորման գծով | 75 | (8,553) | (58,582) | (20,794) | (107,569) |
| 6.2 Ծախսեր պահանջների (վնասների) պահուստի ձեւավորման գծով | 76 | (26,194) | (65,142) | (35,684) | (153,403) |
| 6.3 Ծախսեր մաթեմատիկական պահուստի ձեւավորման գծով | 77 | | | | |
| 6.4 Ծախսեր այլ ապահովագրական պահուստների ձեւավորման գծով | 78 | | | | |
| 7 Ապահովագրության գծով շահույթ (վնաս) | | (25,025) | 82,351 | 40,613 | 85,675 |
| 8.1 Տոկոսային եկամուտներ ավանդների եւ փոխառությունների գծով | 79 | 21,869 | 67,561 | 20,080 | 49,477 |
| 8.2 Տոկոսային ծախսեր փոխառությունների գծով | 80 | | | | |
| 8.3 Այլ տոկոսային եկամուտներ | 81 | | | | |
| 8.4 Այլ տոկոսային ծախսեր | 82 | | | | |
| 9 Զուտ տոկոսային եկամուտ (վնաս) | | 21,869 | 67,561 | 20,080 | 49,477 |
| 9.1 Առեւտրական նպատակներով պահվող արժեթղթերից զուտ շահույթ/վնաս | 83 | | | | |
| 9.2 Վաճառքի համար մատչելի արժեթղթերից զուտ շահույթ/վնաս | 84 | | | | |
| 9.3 Մինչեւ մարման ժամկետը պահվող արժեթղթերից զուտ շահույթ/վնաս | 85 | | | | |
| 9.4 Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներից եկամուտներ | 86 | | | | |
| 9.5 Այլ եկամուտներ | 87 | 53,993 | 168,469 | 60,342 | 259,772 |
| 9.6 Ակտիվների հնարավոր կորուստներին կատարվող զուտ հատկացումներ | 88 | 345 | (1,637) | (36,696) | (39,795) |
| 9.7 Ընդհանուր վարչական ծախսեր | 89 | (31,684) | (83,028) | (29,478) | (71,921) |
| 9.8 Այլ ծախսեր | 90 | (68,073) | (212,453) | (21,168) | (120,582) |
| 10 Շահույթ/ (վնաս) հարկումից առաջ | | (48,577) | 21,263 | 33,692 | 162,626 |
| 11 Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում) | 91 | 7,198 | (11,488) | 1,495 | (470) |
| 12 Շահույթ (վնաս) հարկումից հետո | | (41,379) | 9,775 | 35,187 | 162,155 |
| 13 Հայտարարված շահաբաժիններ, այդ թվում` | | | | | |
| 13.1 արտոնյալ բաժնետոմսերի գծով | | | | | |
| 13.2 սովորական բաժնետոմսերի գծով | | | | | |
| 13.3 մեկ բաժնետոմսին ընկնող բազային շահույթ | 92 | | | | |
| 13.4 մեկ բաժնետոմսին ընկնող նոսրացված շահույթ | 92 | | | | |
| 14 Չբաշխված շահույթ | | (41,379) | 9,775 | 35,187 | 162,155 |

Ապահովագրական ընկերության գործադիր տնօրեն (վարչության նախագահ)

Գլխավոր հաշվապահ

*Հավելված 9*

*Հաստատված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հունիսի 12-ի թիվ 180 Ն որոշմամբ*

**ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ (Ձեւ 8)**

«14»հոկտեմբերի 2010թ.

«Գրիար-Ինշուրանս» ԱՓԲԸ,,ՀՎՀՀ 00847548

ք. Երեւան, Ամիրյան 4/6

01.01.10-30.09.10

| Սեփական կապիտալի տարրերի անվանումը | Կանոնադրական կապիտալ | | | Էմիսիոն եկամուտ /վնաս | Պահուստներ | | | Չբաշխված շահույթ/ վնաս | Միջանկյալ - շահութաբաժիններ | Սեփական կապիտալի այլ տարրեր | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Կանոնադրական կապիտալ | Հետ գնված կապիտալ | Զուտ գումարը | | Գլխավոր պահուստ | Վերագնահատումից պահուստներ* | Վերաչափումից տարբերություններ* | | | | |
| Հոդվածներ | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| **Նախորդ ֆինանսական տարվա համադրելի միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական)** | | | | | | | | | | | |
| Մնացորդը ֆինանսական տարվա սկզբում առ 01 հունվարի 2009թ. | 500,521 | | 500,521 | | 7,949 | | | 94,356 | | | 602,826 |
| 1.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը եւ էական սխալների ճշգրտումը | | | | | | | | | | | |
| 2. Վերահաշվարկված մնացորդը | 500,521 | | 500,521 | | 7,949 | | | 94,356 | | | 602,826 |
| 3. Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված եկամուտներ եւ ծախսեր, այդ թվում` | | | | | | | | | | | |
| 3.1. Հիմնական միջոցների եւ ոչ նյութական ակտիվների վերագնահատման պահուստների աճ կամ նվազում | | | | | | | | | | | |
| 3.2. Վաճառքի համար մատչելի ֆին. ակտիվների եւ հեջավորման գործիքների` իրական արժեքի վերաչափման պահուստների աճ կամ նվազում | | | | | | | | | | | |
| 3.3. Հետաձգված հարկի ազդեցությունը | | | | | | | | | | | |
| 3.4. Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված այլ եկամուտներ եւ վնասներ | | | | | | | | | | | |
| 4. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում` | | | | | | | | | | | 0 |
| 4.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում եւ կանոնադրական կապիտալի այլ աճ | | | | | | | | | | | 0 |
| 4.2. Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում` հետ գնված եւ շրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին | | | | | | | | | | | |
| 5. Նախորդ տարվա (ժամանակաշրջանի) զուտ շահույթ (վնաս) | | | | | | | | 162,155 | | | 162,155 |
| 6. Բաշխված շահաբաժիններ | | | | | | | | | | | |
| 7. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում` | | | | | | | | | | | |
| 7.1. Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների աճ/նվազում | | | | | | | | | | | |
| 8. Ներքին շարժեր, այդ թվում` | | | | | | | | | | | |
| 8.1. Մասհանումներ գլխավոր պահուստին | | | | | 1,187 | | | ( 1,187) | | | |
| 8.2. Գլխավոր պահուստի հաշվին կուտակված վնասի ծածկում | | | | | | | | | | | |
| 8.3. Էմիսիոն վնասի ծածկում | | | | | | | | | | | |
| 8.4. Հիմնական միջոցների եւ ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի նվազում | | | | | | | | | | | |
| 8.5. Սեփական կապիտալի այլ տարրերի ներքին շարժեր | | | | | | | | | | | |
| 9. Մնացորդը նախորդ ֆինանսական տարվա համադրելի միջանկյալ ժամանակաշրջանի վերջում առ 30 սեպտեմբերի 2009թ. | 500,521 | | 500,521 | | 9,135 | | | 255,325 | | | 764,981 |
| **Ընթացիկ տարվա միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական)** | | | | | | | | | | | |
| Մնացորդը ֆինանսական տարվա սկզբում առ 01 հունվարի 2010թ. | 705,671 | | 705,671 | | 9,135 | | | 305,887 | | | 1,020,693 |
| 9.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը եւ էական սխալների ճշգրտումը | | | | | | | | | | | |
| 10. Վերահաշվարկված մնացորդը | 705,671 | | 705,671 | | 9,135 | | | 305,887 | | | 1,020,693 |
| 11. Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված եկամուտներ եւ ծախսեր, այդ թվում` | | | | | | | | | | | |
| 11.1. Հիմնական միջոցների եւ ոչ նյութական ակտիվների վերագնահատման պահուստների աճ կամ նվազում | | | | | | | | | | | |
| 11.2. Վաճառքի համար մատչելի ֆին. ակտիվների եւ հեջավորման գործիքների` իրական արժեքի վերաչափման պահուստների աճ կամ նվազում | | | | | | | | | | | |
| 11.3. Հետաձգված հարկի ազդեցությունը | | | | | | | | | | | |
| 11.4. Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված այլ եկամուտներ եւ վնասներ | | | | | | | | | | | |
| 12. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում` | 289 | | 289 | | | | | | | | 289 |
| 12.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում եւ կանոնադրական կապիտալի այլ աճ | 289 | | 289 | | | | | | | | 289 |
| 12.2. Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում` հետ գնված եւ շրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին | | | | | | | | | | | |
| 13. Նախորդ տարվա (ժամանակաշրջանի) զուտ շահույթ (վնաս) | | | | | | | | 9,775 | | | 9,775 |
| 14. Բաշխված շահաբաժիններ | | | | | | | | | | | |
| 15. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում` | | | | | | | | | | | |
| 15.1. Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների աճ/նվազում | | | | | | | | | | | |
| 16. Ներքին շարժեր, այդ թվում` | | | | | | | | | | | |
| 16.1. Մասհանումներ գլխավոր պահուստին | | | | | 10,636 | | | ( 10,636) | | | |
| 16.2. Գլխավոր պահուստի հաշվին կուտակված վնասի ծածկում | | | | | | | | | | | |
| 16.3. Էմիսիոն վնասի ծածկում | | | | | | | | | | | |
| 16.4. Հիմնական միջոցների եւ ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի նվազում | | | | | | | | | | | |
| 16.5. Սեփական կապիտալի այլ տարրերի ներքին շարժեր | | | | | | | | | | | |
| 17. Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում առ 30 սեպտեմբերի 2010թ. | 705,960 | | 705,960 | | 19,771 | | | 305,027 | | | 1,030,758 |

Ապահովագրական ընկերության գործադիր տնօրեն (վարչության նախագահ)

Գլխավոր հաշվապահ

*Հավելված 10*

*Հաստատված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հունիսի 12-ի թիվ 180 Ն որոշմամբ*

**ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ (Ձեւ 9)**

«14» հոկտեմբերի 2010թ.

«Գրիար-Ինշուրանս» ԱՓԲԸ,,ՀՎՀՀ 00847548

ք. Երեւան,Ամիրյան 4/6

01.01.10-30.09.10

| Ցուցանիշի անվանումը | Ընթացիկ տարվա սկզբից մինչեւ հաշվետու ամսաթիվը | Նախորդ տարվա սկզբից մինչեւ հաշվետու ամսաթիվը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը | 42261 | 29,399 |
| Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր | | |
| Ստացված ապահովագրավճարներ | 230,465 | 257,528 |
| Վերաապահովագրական գործունեությունից ստացված մուտքեր | | 255 |
| Գործառնական այլ գործունեությունից մուտքեր, այդ թվում` | 12,099 | 2,743 |
| | 0 | 0 |
| Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր | 242,563 | 260,527 |
| Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր | | |
| Վճարված ապահովագրական հատուցումներ (ապահովագրական գումարներ) | 75,118 | 34,880 |
| Փոխանցված վերաապահովագրավճարներ | 28,284 | 66,080 |
| Կանխարգելիչ միջոցառումների նպատակով ծախսեր | 0 | 0 |
| Վճարումներ աշխատակիցներին եւ նրանց անունից | 103,060 | 129,843 |
| Առհաշիվ տրված գումարներ | | |
| Վճարումներ բյուջե | 20,850 | 14,217 |
| Գործառնական այլ գործունեությունից ելքեր` այդ թվում | 32,236 | 38,417 |
| Դադարեցված պայմանագրերի գծով | | |
| Ընդամենը գործառնական գործունեությունից ելքեր | 259,549 | 283,436 |
| Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր | (16,986) | (22,909) |
| Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների մուտքեր | | |
| Ոչ ընթացիկ նյութական եւ ոչ նյութական ակտիվների վաճառքից | 0 | 0 |
| Ֆինանսական ակտիվներով գործառնություններից | 289 | 0 |
| Շահաբաժինների եւ տոկոսների ստացումից | 84,751 | 23,938 |
| Ներդրումային այլ գործունեությունից մուտքեր, այդ թվում` | 2,542,768 | 1,397,462 |
| Բանկային ավանդների մարումից մուտքեր | | |
| Ընդամենը ներդրումային գործունեությունից մուտքեր | 2,627,808 | 1,421,401 |
| Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների ելքեր | | |
| Ոչ ընթացիկ նյութական եւ ոչ նյութական ակտիվների ձեռքբերման գծով | 620 | 3,419 |
| Ֆինանսական ակտիվների ձեռքբերումից եւ փոխառությունների տրամադրումից | 83,000 | 127,000 |
| Ներդրումային այլ գործունեությունից ելքեր, այդ թվում` | 2,472,380 | 1,277,700 |
| Բանկային ավանդների տրամադրում | | |
| Ընդամենը ներդրումային գործունեությունից ելքեր | 2,556,000 | 1,408,119 |
| Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր | 71,808 | 13,282 |
| Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր | | |
| Սեփական կապիտալի գործիքների թողարկումից եւ վերավաճառքից | 0 | 0 |
| Ստացված վարկերից եւ փոխառություններից | 0 | 0 |
| Ֆինանսական այլ գործունեությունից մուտքեր, այդ թվում` | 0 | 0 |
| | 0 | 0 |
| Ընդամենը ֆինանսական գործունեությունից մուտքեր | 0 | 0 |
| Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների ելքեր | | |
| Ստացված վարկերի եւ փոխառությունների մարումից | 0 | 0 |
| Վճարված շահաբաժիններ եւ տոկոսներ | 0 | 0 |
| Ֆինանսական այլ գործունեությունից ելքեր, այդ թվում` | 0 | 0 |
| | 0 | 0 |
| Ընդամենը ֆինանսական գործունեությունից ելքեր | 0 | 0 |
| Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր | 0 | 0 |
| Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր | 54,822 | (9,627) |
| Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ * | (10,456) | 5,190 |
| Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին | 86,627 | 24,961 |

* Սույն տողում արտացոլված գումարները չեն հանդիսանում դրամական միջոցների հոսքեր:

Ապահովագրական ընկերության գործադիր տնօրեն (վարչության նախագահ)

Գլխավոր հաշվապահ

Ազգային

# Հաճընցիների հերոսամարտը եւ նրանց պատմական հիշողությունը

## *Նվիրվում է Հաճընի հերոսամարտի 90-ամյա տարելիցին (1920-2010 թթ.)*

Հայ ժողովրդի ազգագրական ինքնատիպ մի խումբը վաղ ժամանակներից բնակություն է հաստատել Լեռնային Կիլիկիայի գեղատեսիլ բնության գրկում, որը կոչվել է Հարգան կամ Հաճըն: Վերջինս, ըստ ժողովրդական ստուգաբանության, «աճել, բնակիչներով շատանալ, բարգավաճել» բառից է ծագել:

Հաճընցիներն այնտեղ դարերով ապրել են խաղաղ ու ստեղծագործ կյանքով: Ժողովրդական վարք ու բարքի, նրանց զբաղմունքների մասին հակիրճ, բայց չափազանց բնութագրական են մեր գրառած բազմաթիվ ու բազմազան նյութերից հետեւյալ երգի տողերն իրենց բարբառով.

*Հէճնօ տէղը եայլօ է,*
*Հէճնցիք թում աղօ էն,*
*Ջույը, ֆէղը համէվ էն,*
*Աչկինտէքը քէլէշ էն,*
*Ջըհէլնէրը իգիթ էն,*
*Գէնջէրը ղունտուրաջի էն,*
*Ըխտիյօրնին ղալայիջի էն,*
*Պառվէնին քայմօն կու մանէն:*
*Հաճընը ամառանոց վայր է,*
*Հաճընցիք բոլոր աղա են,*
*Ջուրը, հողը համով են,*
*Աղջիկները սիրուն են,*
*Ջահելները կտրիճ են,*
*Շատերը կոշկակար են,*
*Ծերերը կլայեկ կանեն,*
*Պառավները իլիկ կմանեն:*

1915 թ. Հայոց ցեղասպանության ընթացքին Հաճընի հայերը տեղահանվեցին, եւ նրանց մեծ մասը Դեր Զորի անապատում նահատակվեց:

Անդրադառնալով պատմական իրադարձություններին՝ հարկ է նշել, որ դեռեւս Առաջին համաշխարհային պատերազմի օրերին՝ 1916 թ., դաշնակից տերությունների՝ Անգլիայի եւ Ֆրանսիայի ներքին պայմանավորվածությամբ (Սայքս-Պիկո), Թուրքիայի պարտության դեպքում 2.600.000 հեկտար մշակովի, բերքառատ հողեր ունեցող Կիլիկիան անցնելու էր Ֆրանսիայի հովանավորությանը: Անգլիայի եւ Ֆրանսիայի իշխանությունները հայկական ազգային պատվիրակության հետ նախապես համաձայնել էին, որ եթե հայ կամավորները կռվեն Թուրքիայի դեմ, հաղթանակից հետո հայերին կտրվեն քաղաքական լայն հնարավորություններ, եւ հայ կամավորները կդառնան նորակազմ Ինքնավար Հայկական Կիլիկիայի քաղաքապահ զինվորներ:

Ուստի թուրքական բանակից, աքսորի ճամփաներից ու տարբեր վայրերից, նույնիսկ հեռավոր Ամերիկայից ժամանած հայ երիտասարդները (մուսալեռցի, այնթապցի, մարաշցի, քեսաբցի, հաճընցի, հուսենիկցի, չնգուշցի, սեբաստացի, խարբերդցի, արաբկիրցի եւ այլք) զինվորագրվում են ֆրանսիական բանակին՝ ստեղծելով Արեւելյան (Հայկական) լեգեոնը: Հայ կամավորներն իրենց անմեղ նահատակ հարազատների վրեժով լցված, արհամարհելով մահը, պարտության են մատնում թուրք գերմանական զորքերին՝ նվաճելով Արարայի փայլուն հաղթանակը Նաբլուսի՝ Պաղեստինի մոտ: Պատմական այդ իրադարձությունները եւս իրենց գեղարվեստական արտացոլումն են գտել ժողովրդական երգերի մեջ.

*Մեկիկ-մեկիկ հաշվեցի չորս տարին,*
*Հայ կամավորները Նաբլուսը գրավեցին.*
*Հայերը հազար հինգ հարյուր հոգի էին.*
*Անգլիացին, ֆրանսիացին ապշեցին:*

Եվ իրոք, հայ քաջարի լեգեոնականներն արժանանում են ֆրանսիական եւ բրիտանական հրամանատարության դրվատանքին: Գեներալ Ալենբին, 1918 թ. հոկտեմբերի 12-ին, հայ ազգային պատվիրակության նախագահ Նուբար Փաշային հղած հեռագրում գրել է. «Ես հպարտ եմ իմ հրամանատարութեան տակ հայկական զօրամաս ունենալուս համար: Նրանք կռուեցին փայլուն կերպով եւ մեծ բաժին ունեցան յաղթանակի մէջ»:

Պատերազմից հետո կնքված Սեւրի պայմանագրով Կիլիկիայի վրա հաստատվելու էր Անտանտի երկրների հսկողությունը, եւ թուրքական զորքերն իբր արդեն դուրս էին բերվելու Կիլիկիայից: Դեր Զորի, Ռաս ուլ Այնի եւ այլ կենդանի գերեզմանոցներից հրաշքով փրկված, ուժասպառ, հյուծված եւ ունեզրկված հայ աքսորականները աստիճանաբար գալիս, տեղավորվում էին Կիլիկիայում: Նրանք, ապագայի նկատմամբ վառ հույսով ու հավատով, սկսում են վերականգնել ավերվածը, մշակել խոպանացած այգիները: Սակայն թուրքերին հաջողվում է լեզու գտնել դաշնակից տերությունների հետ եւ ստիպել ֆրանսիացիներին՝ խաղաղապահ զորքերը դուրս բերել Կիլիկիայից:

Ֆրանսիական զինվորական վարչությունը ոչ միայն լուրջ միջոցներ չի ձեռնարկում հայերի անվտանգությունն ապահովելու ուղղությամբ, այլեւ տեղերում իշխանությունը թողնում է թուրք զինվորական պաշտոնյաների ձեռքին, եւ նրանք չեն զինաթափվում:

Չճանաչելով Սեւրի պայմանագիրը եւ օգտվելով ֆրանսիական զինվորական վարչության անվճռականությունից եւ թուլությունից, թուրքական զորքերն ու տեղի չեթեներն իրենց զենքն ուղղում են Կիլիկիայի հայության դեմ:

1920 թ. հունվարից թուրքական զորքերը գրոհում են Կիլիկիայի հայկական բնակավայրերը: 22 օր տեւող կատաղի մարտերում Մարաշ քաղաքի հայերը կոտորվում են ու մոխրացվում:

Պատմական այդ սահմռկեցուցիչ իրադարձությունների անմիջական տպավորությունների տակ է հորինվել ժողովրդական սեղմ, բայց պատկերավոր երգը.

*Ավա՜ղ, Մարաշին Մարաշ են ասում,*
*Մարա՜շ, քեզ ինչպե՞ս են Մարաշ ասում,*
*Երբ քո մեջ եկեղեցի են հրկիզում,*
*Եկեղեցու մեջ՝ հայեր մոխրացնում:*

Մարաշի կոտորածին զոհ են գնում շուրջ 13.000 հայեր: Այնուհետեւ ողջ մնացած 8.000 մարաշցիներ Ուրֆայի 6.000 հայ բնակչության հետ բռնում են գաղթի ճամփան՝ սաստիկ բուքին ու սառնամանիքին անհաշիվ զոհեր տալով ճանապարհին:



1920 թ. ապրիլի 1-ին թուրքերը պաշարում են Այնթապը: Պատերազմի ավարտից եւ զինադադարից հետո այնտեղ վերաբնակված շուրջ 10.000 այնթապցիների եւ 8.000 սեբաստացի հայ գաղթականների հազիվ խաղաղված կյանքը նորից է փոթորկվում: Այնթապի հայերն անցնում են ինքնապաշտպանության: Տեղում Ազգային միությանը կից ստեղծվում է Զինվորական կենտրոնական մարմին՝ Ադուր Լեւոնյանի գլխավորությամբ: Վերջինս հաշվառման է ենթարկում եղած 750 կռվողների զենքն ու զինամթերքը եւ կազմակերպում ռումբեր պատրաստելու գործը:

Պատմական այդ իրադարձությունների ականատես-վկա այնթապցի **Սանդուխտ Հեքիմյանը** (ծնվ. 1908 թ.) ներշնչանքով է մեզ պատմել իր տեսածները. «1920 թ. Ալի Քըլընչն ահռելի զորքով հարձակվեց Այնթապի վրա: Այնթապի ինքնապաշտպանության ղեկավարն էր Ադուր Լեւոնյանը: Ան այնթապցիներու կերակուրի պղինձներն անգամ հալեցնել տվավ, որ ռումբաներ շինեն: Ան իր կամավորներով հարձակվեցավ թշնամու վրա եւ դուրս եկավ պաշարումեն: Ալի Քըլընչի 24.000-ի հասնող զորքը մեկ գիշերվա մեջ սարսափահար ետ փախավ՝ «Գյավուրըն գէօզիւնիւ քան դօլդու» (Հայու աչքն արյուն լցվեց) գոռալով, որը կնշանակե՝ հայերը վրեժով լցվեցին: Մեր Այնթապում Ադուր Լեւոնյանի վրա այս երգը հանել էին.

*Ադու՜ր փաշա, ոտքի՛ ելիր,*
*Զահիդ կրակը վառի՛ր,*
*Թուրքերը գրոհում են՝*
*Կամավորներով արշավի՛ր»:*

Այդ ընթացքում Կիլիկիայի գրավման ընդհանուր հրամանատար Գոզան օղլու Դողան բեյն իր բազմահազար զորքով պաշարում է Հաճըն քաղաքը, որի 35.000 հայ բնակիչներից Մեծ եղեռնից փրկվել էին միայն 6.000-ը:

*Դողան բեյն էլ եկավ, մտավ Հաճընը...*
*Ափսո՜ս եղավ քեզ, հսկա՜ Հաճըն...*
*Այնտեղ թալանեցին մեր ունեցվածքը...*
*Ոտատակ գնաց անտե՜ր հայը:*

Հակառակորդի կարծիքով՝ «Կիլիկիո հայկական միջնաբերդը՝ Հաճընը, հիմնովին կործանելն ու բնաջնջելը մեկ ժամվա գործ էր եւ աննշան հարձակումով մը պիտի կրնան քաղել 6.000 հայությունը»: Սակայն հաճընցիները լի էին վճռականությամբ: Նրանք իրենց կառավարիչ, փաստաբան Կարապետ Չալյանի ղեկավարությամբ կազմում են Հաճընի ինքնապաշտպանության բարձրագույն խորհուրդը: Պաշտպանության հրամանատար են ընտրում Զորավար Անդրանիկի զինակից սպա Սարգիս Ճեպեճյանին: Կազմակերպում են 4 վաշտ, 60 հեծյալից բաղկացած հեծելազոր: Հաճընն ու իր շրջակայքը բաժանում են պաշտպանական 4 շրջանների: Փորում են խրամատներ եւ այլ ամրություններ, մարտական տրամադրությունը համակում է բոլորին: Ամենուրեք հնչում են ազատատենչ երգեր.

*Հառա՛ջ, հառա՛ջ, հաճընցինե՜ր,*
*Մեր ոխերիմ թուրքն է եկել,*
*Հառա՛ջ, կռվե՛նք՝ ի զե՜ն, ի զե՜ն,*
*Տեսնենք թշնամին ի՞նչ կուզե:*

Զենք կրելու ընդունակ 16-50 տարեկան 1.200 տղամարդկանց բաժանվում է եղած-չեղած 132 հրացանը: Հետագայում ձեռք է բերվում նաեւ երեք հարյուր հրացան, սակայն այդ եւս խիստ անբավարար էր բոլշեւիկյան անսպառ ռազմամթերքով զինված թուրքական բանակի դեմ կռվելու համար: Ահա թե ինչու զենքի խիստ կարիք զգացող հաճընցիներն անհամբերությամբ սպասում էին Ադանայի Ազգային միության միջոցով դրսից ակնկալվող օգնությանը, որի շնորհիվ ոչ միայն զենք ու զինամթերք, այլեւ կռվող նոր ուժեր պիտի հասնեին: Վերջապես երկնքում հայտնվում է բաղձալի օդանավը.

*Օդանավն եկավ մեծ ավետիսով,*
*Մեր սրտերը լցվան ուրախ հույսերով,*
*Թափառին բոլոր մարտիկներն անզեն.*
*Անոնք հոգիով թուրք ջարդել կուզեն:*
*Եղբայրներն արդեն նամակ գրեցին.*
*«Կռվեցե՛ք, եղբա՜յրք, կհասնինք», - ըսին,*
*Սակայն ի՜նչ խաբար, օրերնիս անցան.*
*Հազար հոգիեն երկուք չերեւցան:*

Եվ հաճընցի «անզեն մարտիկների» վիճակը դառնում է հուսահատական, քանի որ ֆրանսիական զինվորական ներկայացուցիչները վարում էին երկդիմի քաղաքականություն. թեպետ խոստացել էին ինքնապաշտպանության համար տրամադրել սննդամթերք, զենք ու զինամթերք, սակայն իրենց խոստումը ոչ միայն չեն հարգում, այլեւ թուրքերին տեղեկացնում են հայերի ինքնապաշտպանության կազմակերպման մասին.

*Ապրիլ կամ՝ մեռնիլ, կտրի՜ճ հաճընցի,*
*Գրավենք՝ ըսին, թե ոչ՝ կմեռնինք,*
*Գրավենք զմեզ թնդանոթն ահեղ,*
*Թող հաղթանակը տանինք փառահեղ:*

Հաճընցի ազատամարտիկները մեծ դժվարությամբ գրավում են թշնամու հսկա թնդանոթը, սակայն արկեր չեն գտնում, որ կրակեն ու պաշտպանվեն: Սովը նեղում է հաճընցիներին. ժողովուրդը ստիպված սկսում է ուտել կատու, մուկ, շուն, կաշի, ծառի կեղեւ, տրեխ: Թշնամին նորանոր թնդանոթներով ու անհամար կանոնավոր զորքով համալրում է իր ուժերը: Ութամսյա երկարատեւ ու համառ դիմադրությունից հետո թուրքերին հաջողվում է հրետանու խաչաձեւ կրակոցների հեղեղով ավերել ու հրկիզել նաեւ Հաճընի քարաշեն տները: Հարյուրավոր քաջարի մարտիկներ ընկնում են դիրքերում, հազարավոր հաճընցիներ անխնա կոտորվում են: Միայն 380 հոգու է հաջողվում կռվելով ճեղքել թշնամու պաշարման շղթան եւ դուրս գալ ահավոր հրդեհի շրջապատումից.

*Երեք հարյուր հայ քաջերով,*
*Բոլոր զինված մոսիններով,*
*Դողան բեյին մենք ջարդ տալով,*
*Հաճըն ինկավ՝ «Վրե՜ժ» գոռալով:*

«Վրե՜ժ» գոռալով ընկնում են նաեւ ընդհատումներով երեք հարյուր տասնչորս օր հերոսաբար դիմադրած Այնթապը, հինավուրց քաղաքամայր Սիսը, պատմական անցյալ ունեցող Տարսոնը, առեւտրի կենտրոն Ադանան եւ հայերով բնակեցված Կիլիկիայի այլեւայլ բնակավայրեր: Ֆրանսիական կառավարությունը, դրժելով իր դաշնակցային պարտավորությունները, 1921 թ. հոկտեմբերի 20-ին, Անկարայում կնքված պայմանագրով, Կիլիկիան հանձնում է թուրքերին՝ կոտորածի վտանգի մատնելով Կիլիկիայի հայությանը: Իսկ արծվաբույն Զեյթունը, որի 30.000 կայտառ ու շեն բնակիչներից միայն 1.058 էր Հայոց ցեղասպանությունից մազապուրծ վերադարձել ու հազիվ սկսել վերականգնել ավերվածն ու հրկիզվածը, այդ զեյթունցիներից շատերը, ազգային հերոս Արամ Չոլաքյանի գլխավորությամբ եւ նրա զինակիցներ Հովհաննես Սիմոնյանի, Էշխիա (հրոսակ) Կարապետի, Մանուկի եւ այլ կտրիճների հետ, միանում են Ամանոսի լեռներում ըմբոստացած հասանբեյցի (Ադանա) Ավետիսի հերոսների խմբին: Հետզհետե ստվարացող, հինգ հարյուրի հասնող, այր ու կին քաջերը Տավրոսի անանցանելի լեռներում, զենքը ձեռքներին, գիշեր ցերեկ կռվելով, ահ ու սարսափի են մատնում շրջակա թուրք գյուղերը եւ թեպետ հետապնդվում են ասկյարներից, սակայն, անասելի դժվարություններ հաղթահարելով, մինչեւ զինադադարը շարունակում են մարտնչել թուրքական զորքերի դեմ՝ հույս ունենալով փրկել իրենց նախնիների օրրան, երբեմնի շենշող Կիլիկիան:

Հետագայում արեւմտահայերը, վերաբնակվելով իրենցից բռնագրավված պատմական Հայաստանից 10 անգամ փոքր հողատարածքի վրա, Երեւանի շրջակայքում սկսում են հիմնադրել իրենց պատմական հայրենիքի հիշատակները խորհրդանշող ավաններ ու թաղամասեր (Նոր Կիլիկիա, Նոր Արաբկիր, Նոր Զեյթուն, Նոր Մարաշ, Նոր Հաճըն, Նոր Այնթապ, Նոր Մուսա Լեռ, Նոր Եդեսիա (Ուրֆա) եւ այլն), սակայն երբեմնի ավերակված տան, հանգած օջախի մրմուռը շարունակում է մխալ նրանց հիշողության մեջ, եւ զավթված Երկրի երազանքը հոգու կանչ դարձած՝ ժողովրդայնացած երգի տեսքով ավանդվում է սերնդից սերունդ.

*Երբ որ բացվին դռներն հույսի,*
*Եվ մենք Երկիր դառնանք կրկին,*
*Չքնաղ երկիր մեր Հայրենյաց,*
*Որ բռնությամբ առին մեզնից:*
*Ցանկամ տեսնել իմ Կիլիկիան.*
*Օդը՝ մաքուր, ջուրը՝ զուլալ,*
*Ցանկամ տեսնել իմ Կիլիկիան.*
*Վանքեր, բերդեր հոնտեղ շա՜տ կան:*
*Երբ որ լուծվի Հայոց Հարցը,*
*Եվ մեզ տրվի նախնյաց հողը,*
*Մենք կվարենք մեր արտերը,*
*Կշենացնենք մեր գյուղերը:*
*Ցանկամ տեսնել Սասուն ու Վան,*
*Զեյթուն, Հաճըն եւ Մուսա Դաղ,*
*Տարոն, Մարաշ, Սիս ու Այնթապ,*
*Կծաղկացնենք մենք անպայման:*

Թեպետ թուրքական կառավարությունը դաժանորեն ընկճում էր տարբեր վայրերում ծայր առած դիմադրողական-ինքնապաշտպանական հերոսամարտերը, սակայն իրենց մարդկային տարրական իրավունքների եւ ազգի ֆիզիկական գոյության համար մարտնչող անձնուրաց հայ հերոսները փայլուն հետք թողեցին հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի պատմության մեջ:

**ՎԵՐԺԻՆԵ ՍՎԱԶԼՅԱՆ**
**Բանասիրական գիտությունների դոկտոր**
**ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող**

# «ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ» ՓԲԸ

ARDSHININVESTBANK

**Տեղեկություններ բանկի մասին**

- «Արդյունաբերության եւ Շինարարության Ինվեստիցիոն Բանկ» Փակ Բաժնետիրական Ընկերությունը 2003թ. փետրվարին գրանցվեց ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ եւ ստացավ բանկային գործունեություն իրականացնելու թիվ 83 լիցենզիան
- 2003թ մարտ-մայիս ամիսներին ձեռք բերեց 80 տարվա պատմություն ունեցող եւ տնտեսության ճյուղերի վարկավորման ուղղությամբ մասնագիտացած հանրապետության համակարգաստեղծ բանկերից մեկի՝ «Արդշինբանկ» ԲԲԸ ակտիվների եւ պարտավորությունների զգալի մասը եւ լայն մասնաճյուղային ցանցը (24 մասնաճյուղ)
- 2003թ նոյեմբեր ամսին ձեռք բերեց Հանրապետության հնագույն բանկի՝ «Հայագրոբանկ» ԲԲԸ-ի բիզնեսի հիմնական մասը իր ենթակառուցվածքներով (35 մասնաճյուղ)
- **Բանկը հանդիսանում է.**

Հայաստանի բանկերի միության անդամ,
Հայ-վրացական գործարար համագործակցության ասոցիացիայի անդամ,
MasterCard/Europay համաշխարհային վճարային համակարգի փոխկապակցված անդամ,
SWIFT համակարգի բաժնետեր,
ՀՀ տարածքում գործող «ArCa» պրոցեսինգային ընկերության բաժնետեր եւ լիիրավ անդամ,
«Հայաստանի հիփոթեքային շուկայի մասնակիցների միության» անդամ,:
«ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ անդամ:
VISA International վճարային համակարգի լիիրավ անդամ:

- Բանկը կառավարում է մասնաճյուղային լայն ցանց՝ 49 մասնաճյուղ Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում եւ 6 մասնաճյուղ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում, ինչպես նաեւ ունի ներկայացուցչություն Փարիզում:
- Բանկը գտնվում է Գրիգոր Լուսավորչի 13 հասցեով: 2010 թվականի երրորդ եռամսյակում բանկի աշխատակիցների միջին օրական թվաքանակը կազմել է 1068 աշխատակից, որից 191-ը ղեկավար անձնակազմ:
- Բանկի, նրա գործունեության, ֆինանսական ցուցանիշների, ծառայությունների մասին ավելի լայնածավալ ինֆորմացիա զետեղված է բանկի ինտերնետային կայքում - www.ashib.am: Նշված կայքում է գտնվում նաեւ բանկի ֆինանսական հաշվետվությունների ամբողջ փաթեթը (ներառյալ կից ծանոթագրությունները), աուդիտորական եզրակացությունը, ինչպես նաեւ տեղեկատվություն բանկի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց եւ բանկի ղեկավարների վերաբերյալ:

**Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը**

- Բանկի ֆինանսական հաշվետվությունները կազմվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտներին համապատասխան:
- Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով (հազարների ճշտությամբ):
- Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են բանկի գործունեության անընդհատության սկզբունքի հիման վրա, որը ենթադրում է, որ Բանկի ակտիվները պետք է իրացվեն եւ պարտավորությունները մարվեն վերջինիս գործունեության բնականոն ընթացքում:

Վարչության նախագահ Ներսես Կարամանուկյան

Գլխավոր հաշվապահ Մանվել Սահակյան

*Ենթահավելված 7*
*Հաստատված է*
*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի*
*2010 թվականի հունիսի 8-ի թիվ 127-Ն որոշմամբ*
*Հավելված 7*
*ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հուլիսի 10-ի թիվ 205 Ն որոշման*

**ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (ձեւ թիվ 7)**
ֆինանսական վիճակի մասին
«30»Սեպտեմբեր 2010թ.
ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ ՓԲԸ, ք. Երեւան, Գ.Լուսավորչի 13
(բանկի անվանումը եւ գտնվելու վայրը)

*(հազար դրամ)*

| | ԱՆՎԱՆՈՒՄԸ | Ծանոթագրություններ | Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանի վերջի դրությամբ | Նախորդող ֆինանսական տարվա վերջի դրությամբ (ստուգված/չստուգված) |
|---|---|---|---|---|
| 1 | Ակտիվներ | | | |
| 1.1 | Կանխիկ դրամական միջոցներ եւ մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում | 13 | 19,602,324 | 31,769,574 |
| 1.2 | Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներ | | 3,838 | 3,838 |
| 1.3 | Պահանջներ բանկերի եւ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ | 14 | 15,452,632 | 11,764,074 |
| 1.4 | Առեւտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվներ | 15 | | |
| 1.5 | Հաճախորդներին տրված վարկեր եւ այլ փոխատվություններ | 16 | 59,869,624 | 54,023,461 |
| 1.6 | Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | 17 | 10,425,084 | 10,760,717 |
| 1.7 | Մինչեւ մարման ժամկետը պահվող ներդրումներ | 18 | | |
| 1.8 | Ներդրումներ վերահսկվող անձանց կանոնադրական կապիտալում | 19 | | |
| 1.9 | Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ | | | |
| 1.10 | Հիմնական միջոցներ եւ ոչ նյութական ակտիվներ | 20 | 8,462,723 | 9,054,424 |
| 1.11 | Հետաձգված հարկային ակտիվներ | 21, 3 | | |
| 1.12 | Այլ ակտիվներ | 22 | 1,157,706 | 1,389,408 |
| | Ընդամենը՝ ակտիվներ | | 114,973,931 | 118,765,496 |
| 2 | Պարտավորություններ | | | |
| 2.1 | Պարտավորություններ բանկերի եւ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ | 23 | 14,698,887 | 13,647,779 |
| 2.2 | Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | 24 | 70,868,268 | 77,407,072 |
| 2.3 | Բանկի կողմից թողարկված արժեթղթեր | 25 | | |
| 2.4 | Առեւտրային նպատակներով պահվող պարտավորություն | 26 | | |
| 2.5 | Վճարվելիք գումարներ | 27 | 98,964 | 70,923 |
| 2.6 | Հետաձգված հարկային պարտավորություններ | 28,3 | 626,271 | 626,266 |
| 2.7 | Պահուստներ | 34 | 104,099 | 108,082 |
| 2.8 | Այլ պարտավորություններ | 29 | 682,678 | 280,744 |
| | Ընդամենը՝ պարտավորություններ | | 87,079,167 | 92,140,866 |
| 3 | Կապիտալ | | | |
| 3.1 | Կանոնադրական կապիտալ | 30 | 13,802,404 | 13,802,404 |
| 3.2 | Էմիսիոն եկամուտ | 31 | 1,711,179 | 1,711,179 |
| 3.3 | Պահուստներ՝ | | 3,656,472 | 3,821,603 |
| 3.3.1 | Գլխավոր պահուստ | | 1,029,674 | 963,121 |
| 3.3.2 | Վերագնահատման պահուստներ | 32 | 2,626,798 | 2,858,482 |
| 3.4 | Չբաշխված շահույթ (վնաս) | 33 | 8,724,709 | 7,289,444 |
| 3.5 | Կապիտալի այլ տարրեր | 32 | | |
| | Մայր կազմակերպությանը պատկանող կապիտալ | | | |
| | Փոքրամասնության բաժնեմաս | | | |
| | Ընդամենը՝ կապիտալ | | 27,894,764 | 26,624,630 |
| | Ընդամենը՝ պարտավորություններ եւ կապիտալ | | 114,973,931 | 118,765,496 |

Վարչության նախագահ Ներսես Կարամանուկյան

Գլխավոր հաշվապահ Մանվել Սահակյան

*Ենթահավելված 6*
*Հաստատված է*
*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի*
*2010 թվականի հունիսի 8-ի թիվ 127-Ն որոշմամբ*

*Հավելված 6*

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի*
*2007 թվականի հուլիսի 10-ի թիվ 205 Ն որոշման*

**ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**համապարփակ ֆինանսական արդյունքների մասին (ձեւ թիվ 6)**
«30»Սեպտեմբեր 2010թ.
ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ ՓԲԸ, ք. Երեւան, Գ.Լուսավորչի 13
(բանկի անվանումը եւ գտնվելու վայրը)

*(հազար դրամ)*

| ԱՆՎԱՆՈՒՄԸ | Ծանոթագրություններ | Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջան | Ընթացիկ ֆինանսական տարվա սկզբից մինչեւ հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակա շրջան (աճողական) | Նախորդող ֆինանսական տարվա համադրելի ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջան | Նախորդ ֆինանսական տարվա սկզբից մինչեւ համադրելի հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան (աճողական) |
|---|---|---|---|---|---|
| Տոկոսային եւ նմանատիպ եկամուտներ | 3 | 2,610,614 | 7,555,134 | 2,742,916 | 9,227,141 |
| Տոկոսային եւ նմանատիպ ծախսեր | 3 | (1,036,244) | (3,438,390) | (1,428,318) | (4,080,345) |
| Զուտ տոկոսային եւ նմանատիպ եկամուտ | | 1,574,370 | 4,116,744 | 1,314,598 | 5,146,796 |
| Կոմիսիոն եւ այլ վճարների տեսքով եկամուտներ | 4 | 490,046 | 1,360,938 | 590,904 | 1,570,468 |
| Կոմիսիոն եւ այլ վճարների տեսքով ծախսեր | 4 | (1,785) | (5,665) | (3,242) | (318,312) |
| Ստացված զուտ կոմիսիոն եւ այլ վճարներ | | 488,261 | 1,355,273 | 587,662 | 1,252,156 |
| Եկամուտ շահաբաժիններից | | 0 | 1,000 | | |
| Զուտ եկամուտ առեւտրային գործառնություններից | 5 | 352,738 | 863,266 | 523,866 | 1,505,920 |
| Այլ գործառնական եկամուտներ | 6 | 61,552 | 176,895 | 58,336 | 152,912 |
| Գործառնական եկամուտներ | | 2,476,921 | 6,513,178 | 2,484,462 | 8,057,784 |
| Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին | 7 | (701,549) | (355,197) | (1,538,624) | (2,164,434) |
| Ընդհանուր վարչական ծախսեր | 8 | (1,149,894) | (2,952,787) | (978,076) | (2,809,655) |
| Այլ գործառնական ծախսեր | 9 | (405,043) | (1,249,887) | (413,475) | (1,220,489) |
| Վերահսկվող միավորներում ներդրումներից զուտ շահույթ/վնաս | 10 | | | | |
| Շահույթը/ (վնասը) մինչեւ հարկումը | | 220,435 | 1,955,307 | (445,713) | 1,863,206 |
| Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում) | 11 | (50,620) | (453,489) | 95,246 | (334,296) |
| Շահույթը (վնասը) հարկումից հետո | | 169,815 | 1,501,818 | (350,467) | 1,528,910 |
| Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ | 12 | | | | |
| Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ | 12 | | | | |
| Ժամանակաշրջանի զուտ շահույթ | | | | | |
| Այդ թվում՝ | | | | | |
| Մայր կազմակերպության բաժնեմաս | | | | | |
| Չվերահսկվող բաժնեմաս | | | | | |
| Այլ համապարփակ ֆինանսական արդյունք | | | | | |
| Փոխարժեքային տարբերություններ արտերկրյա գործառնությունների վերահաշվարկից | | | | | |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ վերագնահատումներ | | | | | |
| Դրամական հոսքերի հեջավորում | | | | | |
| Ոչ ընթացիկ ակտիվների վերագնահատումներից օգուտներ | | | | | |
| Այլ համապարփակ եկամուտի գծով շահութահարկ | | | | | |
| Այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո | | | | | |
| Համապարփակ ֆինանսական արդյունք | | | | | |
| Այդ թվում՝ | | | | | |
| Մայր կազմակերպության բաժնեմաս | | | | | |
| Չվերահսկվող բաժնեմաս | | | | | |
| Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ | | | | | |
| Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ | | | | | |

Վարչության նախագահ Ներսես Կարամանուկյան

Գլխավոր հաշվապահ Մանվել Սահակյան

*Ենթահավելված 8*
*Հաստատված է*
*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի հունիսի 8-ի թիվ 127-Ն որոշմամբ*
*Հավելված 8*
*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի*
*2007 թվականի հուլիսի 10-ի թիվ 205 Ն որոշման*

**ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**Սեփական կապիտալում փոփոխությունների մասին (ձեւ թիվ 8)**
«30» Սեպտեմբեր 2010թ.
ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ ՓԲԸ, ք.Երեւան,Գ.Լուսավորչի 13
(բանկի անվանումը եւ գտնվելու վայրը)

*(հազար դրամ)*

| Սեփական կապիտալի տարրերի անվանումը | Կանոնադրական կապիտալ: Կանոնադրական կապիտալ | Կանոնադրական կապիտալ: Հետ գնված կապիտալ | Կանոնադրական կապիտալ: Զուտ գումարը | Էմիսիոն եկամուտ/վնաս | Գլխավոր պահուստ | Փոխարժեքային տարբերություններ արտերկրյա գործառնությունների վերահաշվարկից | Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ վերագնահատումներ | Դրամական հոսքերի հեջավորում | Ոչ ընթացիկ ակտիվների վերագնահատումներից օգուտներ | Չբաշխված շահույթ/վնաս | Միջանկյալ շահութաբաժիններ | Ընդամենը | Չվերահսկվող բաժնեմաս | Ընդամենը կապիտալ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Հոդվածներ** | **1** | **2** | **3** | **4** | **5** | **6** | **7** | **8** | **9** | **10** | **11** | **12** | **13** | **14** |
| **Նախորդ ֆինանսական տարվա համադրելի միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական) (I աղյուսակ)** | | | | | | | | | | | | | | |
| 1. Մնացորդը նախորդ ֆինանսական տարվա սկզբում առ 01 հունվարի 2009թ. (ստուգված/չստուգված) | 13,802,404 | | 13,802,404 | 1,711,179 | 675,308 | | | | 2,623,195 | 6,380,166 | | 25,192,252 | | 25,192,252 |
| 1.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը եւ էական սխալների ճշգրտումը | | | | | | | | | | | | | | |
| 2. Վերահաշվարկված մնացորդը | 13,802,404 | | 13,802,404 | 1,711,179 | 675,308 | | | | 2,623,195 | 6,380,166 | | 25,192,252 | | 25,192,252 |
| 3. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝ | | | | | | | | | | | | | | |
| 3.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում եւ կանոնադրական կապիտալի այլ աճ | | | | | | | | | | | | | | |
| 3.2. Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ գնված եւ շրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին | | | | | | | | | | | | | | |
| 4. Նախորդ տարվա (ժամանակաշրջանի) զուտ շահույթ /վնաս | | | | | | | | | | 1,528,910 | | 1,528,910 | | 1,528,910 |
| 5.Վաճառքի համար մատչելի ներդրումների իրացումից ֆին. արդյունքին փոխանցված զուտ օգուտ/վնաս | | | | | | | (61,265) | | | | | (61,265) | | (61,265) |
| 6. Համապարփակ եկամուտ | | | | | | | | | | | | | | |
| 7. Շահութաբաժիններ | | | | | | | | | | | | | | |
| 8. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝ | | | | | | | | | | | | | | |
| 8.1. Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների աճ/նվազում | | | | | | | | | | | | | | |
| 9. Ներքին շարժեր, այդ թվում՝ | | | | | 287,813 | | | | | (287,813) | | | | |
| 9.1. Մասհանումներ գլխավոր պահուստին | | | | | 287,813 | | | | | (287,813) | | | | |
| 9.2. Գլխավոր պահուստի հաշվին կուտակված վնասի ծածկում | | | | | | | | | | | | | | |
| 9.3. էմիսիոն վնասի ծածկում | | | | | | | | | | | | | | |
| 9.4. Հիմնական միջոցների եւ ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի նվազում | | | | | | | | | | | | | | |
| 9.5. Սեփական կապիտալի այլ տարրերի ներքին շարժեր | | | | | | | | | | | | | | |
| 10. Մնացորդը նախորդ ֆինանսական տարվա համադրելի միջանկյալ ժամանակաշրջանի վերջում առ 30 սեպտեմբեր 2009թ. (ստուգված/չստուգված) | 13,802,404 | | 13,802,404 | 1,711,179 | 963,121 | | (61,265) | | 2,623,195 | 7,621,263 | | 26,659,897 | | 26,659,897 |
| **Ընթացիկ տարվա միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական) (II աղյուսակ)** | | | | | | | | | | | | | | |
| 11. Մնացորդը ֆինանսական տարվա սկզբում առ 01 հունվարի 2010թ. (ստուգված/չստուգված) | 13,802,404 | | 13,802,404 | 1,711,179 | 963,121 | | 244,277 | | 2,614,205 | 7,289,444 | | 26,624,630 | | 26,624,630 |
| 11.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը եւ էական սխալների ճշգրտումը | | | | | | | | | | | | | | |
| 12.Վերահաշվարկված մնացորդը | 13,802,404 | | 13,802,404 | 1,711,179 | 963,121 | | 244,277 | | 2,614,205 | 7,289,444 | | 26,624,630 | | 26,624,630 |
| 13. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝ | | | | | | | | | | | | | | |
| 13.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում եւ կանոնադրական կապիտալի այլ աճ | | | | | | | | | | | | | | |
| 13.2. Կանոնադրական կապիտալի նվազում, նից այդ թվում՝ հետ գնված եւ շրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին | | | | | | | | | | | | | | |
| 14.Նախորդ տարվա (ժամանակաշրջանի) զուտ շահույթ /վնաս | | | | | | | | | | 1,501,818 | | 1,501,818 | | 1,501,818 |
| 15.Վաճառքի համար մատչելի ներդրումների իրացումից ֆին. արդյունքին փոխանցված զուտ օգուտ/վնաս | | | | | | | (231,684) | | | | | (231,684) | | (231,684) |
| 16. Այլ համապարփակ եկամուտ | | | | | | | | | | | | | | |
| 17. Շահութաբաժիններ | | | | | | | | | | | | | | |
| 18. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝ | | | | | | | | | | | | | | |
| 18.1. Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների աճ/նվազում | | | | | | | | | | | | | | |
| 19. Ներքին շարժեր, այդ թվում՝ | | | | | 66,553 | | | | | (66,553) | | | | |
| 19.1. Մասհանումներ գլխավոր պահուստին | | | | | 66,553 | | | | | (66,553) | | | | |
| 19.2. Գլխավոր պահուստի հաշվին կուտակված վնասի ծածկում | | | | | | | | | | | | | | |
| 19.3. էմիսիոն վնասի ծածկում | | | | | | | | | | | | | | |
| 19.4. Հիմնական միջոցների եւ ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի նվազում | | | | | | | | | | | | | | |
| 19.5. Սեփական կապիտալի այլ տարրերի ներքին շարժեր | | | | | | | | | | | | | | |
| 20. Մնացորդը միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանի վերջում առ 30 սեպտեմբեր 2010թ. | 13,802,404 | | 13,802,404 | 1,711,179 | 1,029,674 | | 12,593 | | 2,614,205 | 8,724,709 | | 27,894,764 | | 27,894,764 |

Վարչության նախագահ Ներսես Կարամանուկյան

Գլխավոր հաշվապահ Մանվել Սահակյան

→

# Պատժամիջոցների հարցը ՈւԵՖԱ-ն կքննարկի հոկտեմբերի 28-ին



Հոկտեմբերի 28-ին ՈւԵՖԱ-ի կարգապահական կոմիտեն կքննարկի Իտալիա-Սերբիա ընտրական մրցախաղի ժամանակ սերբ ֆանատների վարքագիծը, որի պատճառով հանդիպումը 7-րդ րոպեին դադարեցվել էր ու չէր շարունակվել: Համաձայն ՈւԵՖԱ-ի կարգապահական կոմիտեի կանոնակարգի 14-րդ հոդվածի, Սերբիայի ֆուտբոլի ֆեդերացիան լավագույն դեպքում դրամական տուգանքի կենթարկվի: Սակայն բացառված չէ, որ Սերբիայի հավաքականին զրկեն ընտրական մրցաշարի մասնակցությունից:

Ըստ իտալական լրատվամիջոցների, ոստիկանությանը հաջողվել է ձերբակալել անկարգությունների հրահրողին, որը դիմակով էր: Նրան ձերբակալել են Սերբիա մեկնող ավտոբուսում: Ընդհանուր առմամբ ձերբակալվել է 17 մարդ: Սերբ ֆանատների գործողություններն առաջին հերթին ուղղված էին սեփական հավաքականի հանդեպ, որը չորս օր առաջ Բելգրադում 1-3 հաշվով զիջել էր Էստոնիայի հավաքականին: Ջենովայի «Մարասի» մարզադաշտ էին եկել մոտ 1300 սերբ ֆուտբոլասերներ:

Իտալիայի ֆուտբոլի ֆեդերացիան սկսել է երկրպագուներին վերադարձնել գնված տոմսերի գումարը: Իսկ Սերբիայի արտգործնախարար Վուկ Երեմիչը պաշտոնապես ներողություն է խնդրել երկրի կառավարության անունից՝ հավաստիացնելով, որ բոլոր ջանքերը կգործադրվեն անկարգությունների մասնակիցներին հայտնաբերելու եւ խստորեն պատժելու համար:

Կատարվածի վերաբերյալ պաշտոնապես իր տեսակետն է հայտնել ՈւԵՖԱ-ի նախագահ Միշել Պլատինին. «Խորապես ցնցված եմ կատարվածով, որն ինձ հիշեցրեց ֆուտբոլում տեղի ունեցած բռնության այլ դեպքերի մասին: Նման երեւույթների դեմ պետք է համատեղ պայքարեն ֆուտբոլի ֆեդերացիաները՝ համագործակցելով միմյանց հետ: Եվ ես պետք է օգնություն խնդրեմ այն երկրների իշխանություններից, որտեղ նման հիմնախնդիրներ կան»:

Իր հերթին Սերբիայի ֆուտբոլի ֆեդերացիան հայտարարել է, որ հնարավոր անկարգությունների մասին զգուշացրել էր Իտալիայի ֆուտբոլի ֆեդերացիային. «Առաջին հերթին խնդրել էինք ավելի մանրազննին ստուգել մարզադաշտ մտնող սերբ ֆուտբոլասերներին, որպեսզի նրանք պայթուցիկ իրեր չկարողանային իրենց հետ ներս տանել: Իտալական ոստիկանությունը մեզ հավաստիացրել էր, որ ամեն ինչ կանի տոմս գնած յուրաքանչյուր սերբ ֆանատի անձը պարզելու համար: Մենք բոլոր տվյալները նրանց տրամադրել էինք: Նաեւ խնդրել էինք ուժեղացնել Սերբիայի հավաքականի անվտանգության ապահովումը»:

# 17 մլն ֆունտ ստեռլինգ Վագներ Լավի դիմաց

Անգլիական «Տոտենհեմի» ղեկավարությունը մտադիր է ձմռան տրանսֆերային շրջանում թիմ հրավիրել Մոսկվայի ԲԿՄԱ-ի հարձակվող, բրազիլացի Վագներ Լավին: 26-ամյա բրազիլացու համար «Տոտենհեմը» պատրաստ է 17 մլն ֆունտ ստեռլինգ վճարել: Սակայն ԲԿՄԱ-ն նրան 30 մլն ֆունտ ստեռլինգ է գնահատել: Իհարկե, Վագներ Լավը ցանկանում է խաղալ ավելի ուժեղ առաջնությունում: Եթե գործարքը տեղի չունենա, ապա անգլիական ակումբը կփորձի թիմ հրավիրել «Յուվենտուսի» հարձակվող Վինչենցո Յակվինտային:

ԸՆՏՐԱՊԱՅՔԱՐ

# Բլատերը տպավորված է անգլիական իշխանությունների գործունեությունից



**ՖԻՖԱ-ի նախագահ Զեպ Բլատերը Մեծ Բրիտանիայի վարչապետ Դեւիդ Կեմերնի հետ հանդիպման ժամանակ իր հիացմունքն է արտահայտել 2018-ի ֆուտբոլի աշխարհի առաջնության կազմակերպման համար Անգլիայի կատարած նախապատրաստական աշխատանքներից: Նա նշել է, որ Անգլիան այս պահին էլ կարող է հաջողությամբ կազմակերպել եւ անցկացնել այդ առաջնությունը:**

**«Անգլիան շատ բան է արել համաշխարհային ֆուտբոլի համար եւ կարող է թեկուզ վաղը կազմակերպել աշխարհի 2018-ի առաջնությունը: Ի դեպ, սա իմ անձնական կարծիքն է: Տպավորված եմ կատարված աշխատանքներով եւ իմ կարծիքը կհայտնեմ գործկոմին, որը պետք է որոշի 2018-ի աշխարհի առաջնության կազմակերպիչ երկրին: Անգլիան նաեւ կարողացել է պայքար մղել ֆանատների դեմ: Համոզված եմ, եթե Ջենովայում տեղի ունեցած դեպքերը կատարվեին Անգլիայում, տեղի իշխանությունները դա թույլ չէին տա: Անգլիայի մարզադաշտերում ներկայումս տիրող հանգիստ մթնոլորտը երկրի իշխանությունների կատարած աշխատանքի արդյունքն է», նշել է Բլատերը:**

**Նշենք, որ 2018-ի աշխարհի առաջնության կազմակերպիչ երկիր դառնալուն հավակնում է նաեւ Ռուսաստանը: Որոշումը կայացվելու է դեկտեմբերի 2-ին ՖԻՖԱ-ի գործկոմի նիստում: Ռուսները հույս ունեն, որ առաջնության կազմակերպիչ երկիր դառնալուն պետք է օգնի երկրի վարչապետ Պուտինի ելույթը ՖԻՖԱ-ի գործկոմի նիստում: Ինչպես ժամանակին նրա ելույթը ՄՕԿ-ի նստաշրջանում մեծապես կանխորոշել էր 2014-ի ձմեռային օլիմպիադայի մայրաքաղաքի ընտրության հարցը հօգուտ Սոչիի:**

# Սկսվեց 2-րդ շրջանը

**Բիլբարդի շախմատի մրցաշարում մեկօրյա հանգստից հետո սկսվեց 2-րդ շրջանը: Երկու հանդիպումներում էլ գրանցվեց ոչ-ոքի: Հաշտություն կնքեցին Կառլսենն ու Կրամնիկը, Անանդն ու Շիրովը:**

**4 տուրից հետո Կրամնիկը 8 միավորով շարունակում է գլխավորել աղյուսակը: Նրան 2 միավոր է զիջում Անանդը: 3 միավոր ունի Շիրովը, 2՝ Կառլսենը: 5-րդ տուրում ուշադրության կենտրոնում կլինի Կրամնիկ-Անանդ պարտիան:**

**Հայտարարություն**

Սույն թվականի հոկտեմբերի 22-ին, ժամը 12:00-ին ՀՀ Շիրակի մարզի Այգաբացի գյուղապետարանում տեղի կունենա «**Մերձմոսկովյան» ԲԲԸ-ի** կողմից ներկայացված Այգաբացի անդեզիտաբազալտների (1-ին եւ 2-րդ տեղամասեր) հանքավայրի շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հասարակական լսումներ:

Տեղեկությունների համար դիմել՝ ք.Երեւան Կոմիտաս 29: Հեռ. 22-14-85, 22-15-68, 094444432

*Ենթահավելված 9*
*Հաստատված է*
*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի*
*2010 թվականի հունիսի 8-ի թիվ 127-Ն որոշմամբ*

**ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ (ձեւ թիվ 9)**

*Հավելված 9*

30 Սեպտեմբեր 2010 թ

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի*
*2007 թվականի հուլիսի 10-ի թիվ 205 Ն որոշման*

«ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ» ՓԲԸ, ք. Երեւան, Գ..Լուսավորչի 13
(բանկի անվանումը եւ գտնվելու վայրը)

| ԱՆՎԱՆՈՒՄԸ | Նախորդ ժամանակաշրջան | Հաշվետու ժամանակաշրջան |
|---|---|---|
| 1. Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից | x | x |
| Դրամական միջոցների զուտ հոսքեր՝ մինչեւ գործառնական ակտիվների եւ պարտավորությունների փոփոխությունը | 4,173,278 | 3,647,562 |
| Ստացված տոկոսներ | 8,727,042 | 6,780,792 |
| Վճարված տոկոսներ | (4,091,065) | (3,714,325) |
| Ստացված կոմիսիոն գումարներ | 1,570,468 | 1,360,938 |
| Վճարված կոմիսիոն գումարներ | (318,312) | (5,665) |
| Առեւտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներից օգուտ/(վնաս) | (26,659) | (5,888) |
| Արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններից օգուտ/(վնաս) | 1,067,592 | 968,945 |
| Նախկինում դուրս գրված ակտիվների վերադարձ | 97,706 | 1,639,357 |
| Վճարված աշխատավարձ եւ դրան հավասարեցված այլ վճարումներ | (1,914,378) | (1,972,560) |
| Գործառնական գործունեությունից ստացված այլ եկամուտներ եւ վճարված այլ ծախսեր | (939,116) | (1,404,032) |
| Դրամական հոսքեր գործառնական ակտիվների եւ պարտավորությունների փոփոխություններից | 10,096,084 | (17,438,470) |
| Գործառնական ակտիվներում նվազում/ (ավելացում) | 15,322,710 | (15,370,212) |
| այդ թվում՝ վարկերի եւ փոխատվությունների նվազում/ (ավելացում) | 23,474,151 | (7,755,499) |
| առեւտրային նպատակով պահվող եւ վաճառքի համար մատչելի արժեթղթերի նվազում (ավելացում) | (5,763,879) | (4,268,266) |
| Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների նվազում/ (ավելացում) | | |
| այլ գործառնական ակտիվների նվազում/(ավելացում) | (2,387,562) | (2,068,258) |
| Գործառնական պարտավորությունների ավելացում (նվազում) | (5,226,626) | 774,651 |
| այդ թվում՝ հաճախորդների նկատմամբ պարտավորությունների ավելացում/(նվազում) | (1,146,701) | (2,850,413) |
| այլ գործառնական պարտավորությունների նվազում (ավելացում) | (4,079,925) | 7,504 |
| Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչեւ շահութահարկի վճարումը | 14,269,362 | (13,790,908) |
| Վճարված շահութահարկ | (1,369,364) | (180,000) |
| Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից | 12,899,998 | (13,970,908) |
| 2. Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից | x | x |
| Մինչեւ մարման ժամկետը պահվող ներդրումների նվազում (ավելացում) | | |
| Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումների նվազում (ավելացում) | | |
| Հիմնական միջոցներում եւ ոչ նյութական ակտիվներում կապիտալ ներդրումների նվազում (ավելացում) | (62,079) | (54,644) |
| Հիմնական միջոցների եւ ոչ նյութական ակտիվների ձեռքբերում | (98,587) | (79,407) |
| Հիմնական միջոցների եւ ոչ նյութական ակտիվների օտարում | 192 | 472 |
| Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ներդրումային գործունեությունից | | |
| Զուտ դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից | (160,474) | (133,579) |
| 3. Դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից | x | x |
| **Վճարված շահաբաժիններ** | | |
| Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկից ստացված փոխառությունների ավելացում (նվազում) | | |
| Բանկերից ստացված փոխառությունների ավելացում (նվազում) | (1,609,682) | 2,285,096 |
| Ստացված այլ փոխառությունների ավելացում (նվազում) | 2,387,159 | (1,506,826) |
| Բանկի կողմից թողարկված արժեթղթերի ավելացում (նվազում) | (707,200) | |
| Բաժնետերերի ներդրումները կանոնադրական կապիտալում | | |
| Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարների ավելացում (նվազում) | | |
| Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ֆինանսական գործունեությունից | | |
| Զուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից | 70,277 | 778,270 |
| Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների եւ դրանց համարժեքների վրա | 6,727,792 | (1,625,450) |
| Դրամական միջոցների եւ դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում) | 19,537,593 | (14,951,667) |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում | 25,209,428 | 42,875,215 |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում | 44,747,021 | 27,923,548 |

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 14.10.10 թ.

Վարչության նախագահ — Ներսես Կարամանուկյան

Գլխավոր հաշվապահ — Մանվել Սահակյան

*Ենթահավելված 9.1*
*Հաստատված է*
*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի*
*2010 թվականի հունիսի 8-ի թիվ 127-Ն որոշմամբ*
*Հավելված 9.1*

**ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ (ձեւ թիվ 9 ա)**
(անուղղակի մեթոդ)
«30» Սեպտեմբեր 2010թ
«ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ» ՓԲԸ, ք. Երեւան, Գ..Լուսավորչի 13
(բանկի անվանումը եւ գտնվելու վայրը)

| ԱՆՎԱՆՈՒՄԸ | Նախորդ ժամանակաշրջան | Հաշվետու ժամանակաշրջան |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| Շահույթ հարկումից առաջ | 1,863,206 | 1,955,307 |
| Գործառնական գործունեություն | x | x |
| Հիմնական միջոցների ամորտիզացիա | 716,376 | 674,213 |
| Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա | 13,508 | 15,953 |
| Գործառնական գործունեությանը վերագրելի այլ ակտիվների (աճ)/նվազում | 8,390,864 | (14,548,124) |
| Գործառնական գործունեությանը վերագրելի այլ պարտավորությունների աճ/(նվազում) | 1,916,044 | (2,068,258) |
| Գործառնական գործունեությունից ընդամենը ճշգրտումներ | 12,899,998 | (13,970,909) |
| Ներդրումային գործունեություն | x | x |
| Կապիտալ ծախսումներ | (62,079) | (54,644) |
| Ներդրումներ | (98,395) | (78,935) |
| Ներդրումային գործունեությանը վերագրելի այլ ակտիվների (աճ)/նվազում | | |
| Ներդրումային գործունեությունից ընդամենը ճշգրտումներ | (160,474) | (133,579) |
| Ֆինանսական գործունեություն | x | x |
| Փոխառությունների եւ այլ վճարվելիք գումարների աճ/(նվազում) | | |
| Վճարված դիվիդենտներ | | |
| Բաժնետոմսերի վաճառք (հետգնում) | | |
| Ֆինանսական գործունեությանը վերագրելի այլ պարտավորություններիների աճ/(նվազում) | 70,277 | 778,271 |
| Ֆինանսական գործունեությունից ընդամենը ճշգրտումներ | 70,277 | 778,271 |
| Փոխարժեքի տատանումների ազդեցությունը | 6,727,792 | (1,625,450) |
| Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակշրջանի վերջին | 44,747,021 | 27,923,548 |

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 14.10.10
թ.

Վարչության նախագահ — Ներսես Կարամանուկյան

Գլխավոր հաշվապահ — Մանվել Սահակյան

**ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**Հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ** (եռամսյակային)

«ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ» ՓԲԸ
7/1/2010 թ-ից ---30/09/2010--- թ.
(հազ. դրամ)

| Նորմատիվներ | Նորմատիվի փաստացի մեծությունը՝ հաշվարկված բանկի համար | ՀՀ կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը | Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| Բանկի կանոնադրական հիմնադրամի նվազագույն չափը | 15,513,583 | 50,000 | Խախտում առկա չէ |
| Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը | 25,743,623 | 5,000,000 | Խախտում առկա չէ |
| $Ն_1$ Ընդհանուր կապիտալի եւ ռիսկով կշռված ակտիվների գումարների միջեւ նվազագույն հարաբերակցությունը | 29.93% | 12.0% | Խախտում առկա չէ |
| $Ն_2^1$ Բանկի բարձր իրացվելի ակտիվների եւ ընդհանուր ակտիվների գումարների միջեւ նվազագույն հարաբերակցությունը | 38.20% | 15.0% | Խախտում առկա չէ |
| $Ն^2_2$ Բանկի բարձր իրացվելի ակտիվների եւ ցպահանջ պարտավորությունների միջեւ նվազագույն հարաբերակցությունը | 150.41% | 60.0% | Խախտում առկա չէ |
| $Ն_3^1$ Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը | 16.65% | 20.0% | Խախտում առկա չէ |
| $Ն_3^2$ Խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափը | 87.65% | 500.0% | Խախտում առկա չէ |
| $Ն_4^1$ Բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափը | 3.20% | 5.0% | Խախտում առկա չէ |
| $Ն_4^2$ Բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափը | 10.28% | 20.0% | Խախտում առկա չէ |
| Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում տեղաբաշխված պարտադիր պահուստների նվազագույն չափը | X | Դրամով - 8% Արտարժույթով - 12 % | Խախտում առկա չէ |

Վարչության նախագահ — Ներսես Կարամանուկյան

Գլխավոր հաշվապահ — Մանվել Սահակյան

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 14.10.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: